

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

-478-

# ՄԱՆՈՒԿ ԲՆԱԳԵՏ

ԴԱՍՏԻՐՔ Ա ԽՄԲԻ ՀԱՄԱՐ

9 6 8 2 1 0 8 -- 0 1 0 0 0 0 0 4 2 3 0 0 8

Օ Ե Բ Ե Վ Ա Ե

1932


11 NOV 2017  
3 9m

-478-

# ՄԱՆՈՒԿ ԲՆԱԳԵՏ

Դաստիքի Ա. խմբի համար

ԿԱԶՄԵՑ Զ. ԱՃԵՄՑԱՆ  
ԽՄԲ. Ն. ԽԱՆՁՑԱՆ



ԹԵՏՐԱՑ

ՅԵՐԵԿԱՆ

ՈՒՍՍԱՆԿՐԱՏ

1932

-842-

## ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

### ԴՊՐՈՑՈՒՄ

Կիմը, Նինելը, Սուրբիկը, Ռաֆիկը, Շուշիկը բոլորը,  
բոլորը դպրոց են գնում:

Հիմա դասարանումն են:

Ուրախ նոտել են իրենց տեղերը: Հերթապահները  
նայում են. մաքուր են արդյոք նրանց գլուխները, ձեռ-  
քերն, ականջները, փեզը, ջորերը, խոժ պատոված չեն:

— Սուրբիկ, ելի ականջներդ կեղտոտ են, գնա լվաց-  
վիր, յեղունգներդ ել կտրիր: Յես ստիպված եմ ցուցա-  
կում նշանակել այդ մասին:

— Տեսեք, կիմն ինչ մաքուր ե...

Իսկ կիմն հպարտ, հպարտ հայտնում ե.

— Յերեք որ ե ինչ մեզ մոտ բացվել ե ընդհանուր  
լվացքատունը: Յերբ քեֆդ ուզի տաք շուր կա: Միշտ  
ել մաքուր ենք լինելու:

**ԴԱՍԱՍԻԶՈՅՆ ԱՆՑ ԿԱՑՐԵՔ ԹԱՐՄ ՈԴՈՒՄ:  
ԴԱՍԱՐԱՆԻ ԼՈՒՍԱՄՈՒՏՆԵՐԸ ԲԱՑԵՔ ՈԴԸ—ՍԱՔՐՎԻ:**

**ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ԺԱՄԱՆԱԿ ՈՒՂԻՂ ՆԱՏԵՑԵՔ:**

### ԲԺՇԿԻ ՊԱՏՄԱԾՆԵՐԻՑ

Յերբ բժիշկը մեզ քննեց, շատերի սպիտակեղենը,  
մարմինը, մանականդ ձեռքերը կեղտոտ եյին:

Բննելուց հետո բժիշկը յեկավ դասարան ձեռքին

Հայպոլիգրաֆի տպարան  
Հրատարակ. № 2319  
Պատկեր № 2556  
Գլ. № 7597(Բ)  
Տիրած 8000

11-26117 9/ր



Մերագրեց՝ Պողոս Միքայան

Հանձնված և առաքրության  
28/VII 1932 թ.

Ստորագրված և տպելու<sup>1</sup>  
28/XIII 1932 թ.



խոշորացույց։ Նա մոտենում եր ամեն  
մեկիս, խոշորացույցը դնում մեր ձեռ-  
քին և հարցնում եր, ի՞նչ ենք տեսնում։  
Մենք տեսնում ենք, վոր մեր մաշկը ծածկված ե փո-  
սիկներով։

Բժիշկը բացատրեց, վոր դրանք անցքեր են։ Յեթե  
այդ անցքերը ծածկվեն, կեզտով, մարմնի միջի վնասա-  
կար նյութերը կմնան ներսում և կթունավորեն մար-  
մինը։ Մարդը կդառնագունատ, արնապակաս։

Կաշվի անցքերը միշտ բաց պետք ե լիսեն, վոր  
քրտինքը ազատ դուրս, գա նրանց միջով և մարդ առողջ  
լինի։

Դրա համար պետք ե շուտ, շուտ լողանալ տաք  
ջրով և ոճառով։

Պետք ե սպիտակեղենը շուտ-շուտ փոխել։

## ՔՈՍ. ՅԵՎ. ՏՐԱԽՈՄԱ.

Քոսը և տրախոման վարակիչ հիվանդություններ  
են։ Քոսի տիզը ծակում ե մաշկը, տեղափորվում նրա  
տակ և բազմանում։

Նա այնքան փոքր ե ավոր հասարակ աչքով չի յե-  
րեցվում։ Իսկ վորքան անհանգստություն և ցավ ե պատ-  
ճառում մարդու։

Մաշկը ծածկվում ե ժահրոտ, բշտիկներով և սաս  
տիկ օրոր ե գալիս։

Քոսը շատ վարակիչ ե։

Տրախոման – աչքի հիվանդություն ե։  
Աչքի կոպերը կարմրում են ջրակալում։ Կոպերի  
վրա ներսի կողմից առաջ են գալիս մանրիկ ժահրոտ  
բջտիկներ։

Վայ ե թե այդպիսի հիվանդի յերեսորբիչով սըրբ-  
վես, ել պրծավ.. դու ել կվարակվես։

**ԱՌԱՆՁԻՆ ՅԵՐԵՍՍՐԲԻՉ ՈՒՆԵՑԵՔ**

**ՈՎԱ ԶԻ ՈՒԶՈՒՄ ՀԻՎԱՆԴԱԿԱ**

**ԹՈՒ ՁԵՌԵՐԸ ՇՈՒՏ, ՇՈՒՏ ԼՎԱ-**

## ՊԱՀՊԱՆԻՐ ԱՉՔԵՐԴ ՈՒ ԱԿԱՆՁՆԵՐԴ

Լուսամուտից հեռու, մութ անկյունում մի  
կարդա, մի գրի, մի նկարի, մի կարի։

Գիրքը կամ աշխատանքը աչքերիդ մոտիկ մի  
պահի։

Պառկած մի կարդա։

Պահպանիր աչքերդ...

Ականջդ մի փորի լուցկով կամ ուրիշ կոշտ  
իրերով։ Միշտ լվա։

**Տ Ա Ն Բ**

Փակցրեք ճաշի սեղանի վերկը։

ՃԱՇԻՑ ԱՌԱԶ,

ՃԱՇԻՑ ՀԵՏԱ

ՄԻՇՏ ԼՎԱՑՎԻՐ,

ՄԻՇՏ ԼՎԱՑՎԻՐ

**ԿԵՐԱԱՌԱՆՁԻՆ ԱՍԱՆԻՑ**

**ԱՄԱՆՆԵՐԸ ՄԱՔՈՒՐ ՊԱՇԵՔ**

## Ի՞նչն ենք ՀԱՇՎՈՒՄ ՄԵՆՔ ՄԵՐԸ

—Ի՞նչն ենք հաշվում մենք մերը,  
ուրիշն մոտ չենք թողնում,  
առավոտը վեր կենում,  
խկույն կարգի յենք բերում:



Մտածում են, մտածում,  
ամենը մի բան ասում,  
և վոչ մեկը չի գտնում,  
վոր ճիշտն ասի,—անկողին:



—Ի՞նչն ենք հաշվում մենք մերը,  
ու չենք տալիս ուրիշն,  
առավոտը նրանով,  
եռք, յերես ենք չորացնում:

Չի մտածում ել վոչ վոր,  
—Յերեսարփին ե, ի՞նչ ե...

—Ի՞նչն ենք հաշվում մենք մերը,  
լվացարանի մոտն ե,  
նրան բերան ենք տանում,  
վոչ ծամում ենք, վոչ ուտում:



Յերեխաներն խկույն  
ծիծապելով ասացին.

—Եղ խոժ բոլորս ել պիտենք  
խոզանակն ե ատամի:

—Ի՞նչն ենք հաշվում մենք մերը,  
ու վոչ վորի չենք տալիս,  
վոչ ել ուրիշից ուզում,  
միշտ գրապանում ենք պահում:  
—Եղ սուլիչն ե, մատիսն ե,  
գրչածայրն ե, թե գնդակ...  
—Վհչ, վհչ միայն Սուրիկը  
ճիշտն իմացավ.—թաշկինակ:



## ՄԵՐ ԴԵՂԵՐԻ ՊԱՀԱՐԱՆԸ


Մենք վորոշեցինք ունենալ դեղերի  
պահարան

Պ Ե Տ Ք Ե

- Գնել դեղեր դպրոցի բժշկուհու  
և ուսուցչուհու ցուցմունքով:
- Շինել փոքրիկ պահարան մեր  
արհեստանոցում քեռի Տիգրա-  
նի ոգնությամբ:
- Սովորել պահել և գործադրել  
դեղերը:

Մեր վորոշումը կատարեցինք

Ո Ւ Ե Ն Ք



Աշխատանքները կատարում ե սանիտարական արտելը,  
Վ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԿԱԶՄԱԿԵՐՊԵՆՔ ՏՆԵՐՈՒՄ ԴԵՇԵՐԻ ՊԱՀԱՐԱՆՆԵՐ

## Գ Յ Ա Հ Ո Ւ

Փոքրիկ հասմիկը խաղալիս վալր ընկավ:  
Ճակատը կպավ պղնձե ամանին ու պատովեց:  
Արլունը հոսում ե վերքից, չի կանգնում:  
Դարբին Պետրոսը, հասմիկի հալը, վազեց տատմոր  
լեռկից:

Ահա լեկավ պառակ տատմերը, գլուխը տմբտմբացնելով  
մշտեցավ հասմիկին, նայեց վերքին:

Տան անկլուններից սարդի վոստախն հավաքեց, դրեց  
հասմիկի ճակատին, մի կեղտոտ փալտոով կապեց ու պատ-  
կիրեց:

—Զլինի լվացվեցնեք, վերքը ջուր կգողանա:  
Վոչինչ չկա, լերեք որից հետո կլավանա:  
Հետո վերցրեց 10 ձու, փող ու գնաց:

Հասմիկը քանի գնում վատանում ե:  
Տաքությունը բարձրացել ե: Կոմսոմոլ Շողիկը լեկավ տե-  
սավ, բարկացավ ծնողների վրա:

—Ի՞նչ եք մտածում, ուզում եք մեռնի...  
Շուտ հիվանդանոց հասցրեք:

Հիվանդանոցում բժիշկը բացեց  
հասմիկի վերքը: Արլունը չորացել, սե-  
վացել եր: Վերքը մեծացել, ժահրակա-  
լել:

—Յես ցուցի կտամ եղ տատմորը: —  
ասաց բժիշկը:

Վերքը մաքուր ջրով և դեղերով  
լվացին, կտպեցին:

Հասմիկը շուտով առողջացավ:



## Թ Ո Ղ Ա Յ Ր Ի

Յես դանակով փայտ եյի տաշում:

Չգիտեմ ինչպես յեղավ, մատս կտրեցի:

Յես փոքր չեմ: Յերբ մատիցս արյուն ե հոսում,  
յես լաց չեմ լինում:

Յերբ կտրած մատիս ի՞նդ են կաթեցնում, յես չեմ  
բղավում: Չե վոր յես հիմա մեծ եմ: Թող քիչ ել այրի,  
շուտ կլավանա:

ԵԵՐԹԱՊԱՀՆԵՐԸ ԿՏՐՎԱԾ ՎԵՐԲԻՆ ԻՈՒ ԵՆ ՔՍՈՒՄ ՅԵԿ  
ՄԱՔՈՒՐ ԲԱՄԲԱԿՈՎ ՅԵՎ ԹԱՆՁԻԹՈՎ ՓԱԹԱԹՈՒՄ:  
ՀԱՐՎԱԾԻՑ ՑԱՎԱԾ ՏԵՂԻՆ ՄԱՔՈՒՐ ԶՅԱՆ, ԿԱՄ ՍՍՈՒ  
ԶՐՈՎ ԹՐՁԱԾ ՇՈՐԻ ԿՏՈՐ ԵՆ ԴՆՈՒՄ.

## Զ Մ Ե Ռ Ը

Պահպանիր քեզ մըսելուց:

1. Յերեք ձյուն և սառուց չուտես:
2. Վոտքերդ չթրջես:
3. Թրջվածը շուտ ե մըսում:
4. Զափաղանց շատ չհագնվես, բըտնածը շուտ ե մըսում:



## ՀԱՂՈՐԴԵՑԻՆ

Ոհանի կինը հիվանդացել եր:  
Ոհանը նրան հիվանդանոց տարագ:  
Հետո մտածեց, ուր տանի փոքրիկ նիսելին:  
Ինքն աշխատում է գործարանում: Մանկամսուրն ել փերանորոգում են, փակել են:  
Ու Ոհանը նիսելին տարագ գլուղ տատի մոտ:  
— Լավ նայեցեք յերեխին: Զլինի թե յեկեղեցի տանեք: —  
պատվիրեց Ոհանն ու իւս գարձագ քաղաք:  
Զհամբերեց պառագ տատիկը նիսելին տարագ յեկեղեցի  
հաղորդելու: Նա ուզում եր ինքը, տուաջինը մոտենատ տեղտերին, բայց Հոռոմն իր թոռի հետ առաջ ընկագ: Հոռոմի թոռը  
հիվանդ եր, տմբողջ մարմինը դուրս տված:

\* \* \*

Անցավ մի քանի որ: Պստիկ նիսելը հիվանդ եւ Պտոկած  
ե տաքութիւն մեջ: Ծաղիկ ե ընկել:

«Ես ի՞նչ պատահեց, յես ի՞նչ եմ անելու, թե մի բան պատահի, սրա հորն ու մոքը ի՞նչ եմ՝ ասելու» — մտածում ե տատիկը, զարմանում ե, պատճառը չի գտնում:

Նա չի հասկանում, վոր նիսելը յեկեղեցում Հոռոմի հիվանդ թոռից ե վարակվել:

**ԾԱՂԻԿԻ ԾԵԾԵԼ ՏՈՒՐ**

ՅԵԿԵՂԵՑԻ ՄԻ ԳՆԱ

## ԱՆՆԱ ՏԱՏԻԿՆ ՈՒ ԱՐՄԻԿ ԹՈՒՆԻԿԻ

Առավտներն Արմիկը դպրոց եղնում, իսկ տատիկը վառարանը լավ վառում, դուռ ու լուսամուտ պինդ փակում ու նստում եւ:

Արմիկը դպրոցից սուն ե վերադառնում. Ճանապարհին ջնջում ե սառը, մտքուր ոդ: Համնում ե տուն գուռը բաց անում, ուհի ինչ վատ ոդ ե, ջնջել չի լինում...

Հատակին աղը կուսամուտները փոշոտ: Մութ:

— Տատիկ ի՞նչպես ես նստել ես ոգում:

— Շնւտ արա, շուտ արա, դուռը փակիր, ցուրտը տուն լցվեց. — ասում ե տատի:

— Տատիկ, արի հատակը լվանանք:

— Բան ասացիր, ելի խոնավությունը տուն մի դցիր:

Մի որ ել ահա տատը տանը չե, Արմիկը գործի յեկաել:

«Քանի տատս չի յեկել, յես մի տունը կտրգի գցեմ, ինչպես դպրոցումն են սովորեցրել» մտածում ե Արմիկը.

Ողանցքը բացեց, վոստահները պատերից սրբեց, ապակիները մաքրեց, հատակը լվաց: Աղբի արկղն ել գրեց անկյունում, վառարանի մոտ:

Ահա տատիկն ել յեկավ, նստեց, չորս կողմն ե նայում:


— Ես ի՞նչ ե պատահել չեմ հասկանում, կարծես տոն լինի ասում ե նա:

Արմիկը ծիծաղում եւ:


— Լավ ե չե, տատիկ:

— Լավ ե, բա վատ ե...

— Տատիկ ջան, արի ամեն որ եսպիսի տոն կտարենք, համ...



Վանդակներում գրեցեք ամսաթիվը և նկարեցեք յեղանակի պայմանական նշանը:



(Արև որ)



(Անձրև)



(Քամի)

## ՅԵՐԲ Ե ԴՈՒՐԻ ԳԱԼԻՍ ԱՐԵՎԸ, ՅԵՐԲ ԵՆ ՎԱՌՈՒԽՄ ԼՈՒՑՄԸ

ԼԵՆԻԿԸ դպրոցից տուն յեկավ:


— Մայրիկ, ինձ առավոտը շուտ կզարթեցնեմ, այնքան շուտ, վոր յես տեսնեմ. սրբի դուրս գալը. Արևը դուրս գա թե չե, յես պետք են նայեմ ժամացույցին և ժամն ու ըովեն տետրումս նշանակեմ. Հետո, յերեկոյան յերբ լույսը վառենք, յես ելի պիտի ժամը նշանակեմ Մամա, մեր ժամացույցը ճիշտ ե աշխատում...

— Ճիշտ ե, Լենիկ ջան, իսկ թվականը տիվեցիր:

— Ի՞նչպես եմ գրելու, մամա, չե վոր յես դեռ գըել չգիտեմ...

— Դրա համար ես տիվել, Լենիկ ջան, դու շուտով գրել կսովորեմ, իսկ մինչ այդ յես բեզ կոգնեմ. — ասան Լենիկի մեծ քույր Հեղուշը:

### ՍԵՊՏԵՄԲԵՐ



23

Տաս որը մի անգամ նշանակեցեք,

Ուրեմն ցերեկը . . . . .

գիշերը . . . . .

Զմոռանաք սեպտեմբերի 23-ը.

ԱՇՆԱՆ ԱՄԻՒՆԵՐՆ ԵՆ՝

Սեպտեմբեր 30 որ

Հոկտեմբեր 31 որ

Նոյեմբեր 30 որ

## Ա Շ Ո Ւ Ն

Աշուն ե: Շուտով ցրտերը կընկնեն:

Մարդիկ շտապում են. այգու, բանջարանոցի բերը հավաքում, ձմռան պաշար են տեսնում:

Ցրտից պաշտպանվելու համար տաք հագուստներ են գնում: Ամրացնում են տները, կոտրած ապակիների տեղնորերն են զցում:

Ամրացնում են և անասունների գոմերը, նրանց համար կեր պատրաստում:

Շտապում են բոլորն, շտապում...

Զմեռը մոտենում ե:

## ԵՔՍԿՈՒԽՄԻԱ. ԴԵՊԻ ԱՆՏԱՌ

— Հնկեր Աննա, եքսկուրսիս գնանք ո՞նտառ գնանք... —

Խնդրում են յերեխաները

— Լավ գնանք, բայց նախ պետք ե ծրագիր մշակենք. — պատասխաննեց ուսուցչուհին.

Ահա այսպիսի ծրագիր մշակեցին.

1. Ծանոթանալ վշատերեւ և սաղարթավոր ծառերի հետ:

2. Դիտել նրանց տերևներն ու սերմերը, բերել գպրոց հավաքածու կազմելու համար.

3. Ծանոթանալ թփերի հետ

4. Դիտել յերկինքն, ամպամած և թե պարզ:

5. Վարոշել բամու ողջությունը. դիտել ի՞նչպես և բարձրանում ծխնելու լվների ծուխը:

## ԱՆՏԱՌՈՒԽՄ

Քամին վչեց, ու ծառերից,  
տերևները վայր ընկան..

Տերեւ դեղին  
թռչում ե, թռչում

ու ընկնում գետին:  
Ընկնում են գետին  
տերևներ դեղին.

Դարսվում են, դարսվում  
վոտքի տակ խցում:

Ահա աճարի ծառը, նայեցեք նրա տերևներին,  
ահա սերմերը. — ցույց ե տալիս սւսուցչուհին:

Յերեխաները տեսան թխկիի, հացենու, շամի թևա-  
փոր պտուղները, վորոնց բամին թոցնում ե ողի  
միջով ու տարածում:

Տեսան թփեր, մասրի, հաղարձի:

Ծանոթացան և այնպիսի բույսերի հետ, վորոնց  
սերմերը փոքրիկ կարթիկներով կպչում են կենդանինե-  
րից, մարդկանցից և թռչուններից ու տեղավոխվում  
տարբեր տեղեր:

Ահա և հաստաբուն կտղնին:

Կիմը տեսավ թե չե, յերգել սկսեց:

Մենք ել միացանք նրան ու յերգեցինք

Մեր ծեր կաղնին

իր հին բունը

տվել ե չորս վարձվորի:

Արմատի մոտ ներքնատունը  
մուկն ե բոնել ալս տարի:

Ատաղձագործ վայտիորիկը

ցածի հարկի տնակում

անց ե կացնում իր որիկը,


թակում, կտցում, ծակոտում:

Իսկ վերևի հարկում տիտիկ,  
 շեկ սկզուռն ե բնակվում,  
 կաղին, ընկույզ, սերմ ու հատիկ  
 դիզում իր լի փչակում:  
 Թավ ճյուղքումը դրել ե բուն  
 մի զիլ լերգիչ դուրսալի  
 ու ծլվլում ե որն ի բուն:


ՄԵՆՔ դիտեցինք նաև լերկինքը, ջուրը, վորոշցինք քա-  
 մու ուղղությունը, հետո տուն լեկանք:

## ՄՅՈՒՄ ՈՐԸ ԴՊՐՈՑՈՒԻՄ

Անտառից վերցրած տերեներն ու սերմերը դասավորե-  
 ցինք ու նկարեցինք  
 Ահա այսպես



Նկ. դանաղան ձեզի  
տերելներ



Խեղճ ծառեր, առանց տերեկի ձմեռը կմըսեն.—ասաց  
 Աշխենը:

—Վոչ, Աշխեն, ծառի կեղեցը կպաշտպանի նրան ձմռան  
 ցըտերից: Իսկ տերեների թափկելը ծառին ոգուտ ե:

Հիշում եք, յերե մեզ մոտ մալիսին ձյուն յեկավ ինչքան  
 ծառերի ճյուղեր կոտրավեցին: Այդ ինչիցն եր: Զմեռն այդ-  
 քան կոտրատվում են: Մալիսին տերեները բոլորը թափված  
 ձյունը իրենց վրա պահեցին, ճյուղերը ծանրացան ու կոտ-  
 րատվեցին: Յեթե տերեները չթափկեն ծառից, ձմեռը ճյուղ  
 չի մնա—կը կոտրատվի:

Կանաչ տերեները գարնանն ու ամառը արեկի ուժեղ լույ-  
 սի ու ջերմության տակ բույսի համար սնունդ ելին պատրաս-  
 տում

Աշանը, արեկի պակասած լույսի ու ջերմության տակ  
 դեղին ու կարմիր տերեներն ավելի շատ են սնունդ պատրաս-  
 տում, քան կանաչները:

Տերեների մեջ հավաքված սննդանութերը հետզհետե տե-  
 ղափխովում են բույսի ցողունի և արմատի մեջ ու մնում այն-  
 տեղ մինչև դարուն

Այդ ել բույսերի աշնան պատրաստությունն ե ձմռան  
 համար:

## ԹԱՓՎԱԾ ՏԵՐԵՎՆԵՐԸ

Գարնանը անձրեկի ջուրը օծվում է թափված տերեների  
 արանքը և յերկար ժամանակ մնում այստեղ, գետինը չի չո-  
 րանում, խոնավ է մնում: Այդ զավ և բույսի համար:

Թափված տերեները մթում գործում են փթահող վորից  
 բույսը սնունդ և վերցնում է նրան վրա նոր տերեներ են  
 բացվում:



## ԹՌՉՈՒՆՆԵՐՆ ԱՃՆԱՆԲ

Տեսուր ե ճնճղուկը:

Քիչ ե ճփճփում, ծույլ-ծույլ թռչկոտույ ե դես ու  
գեն. Ուտուլ չի ուզում.

Փետուքները թափթփիվում են ամեն տեղ:

Ման ե գալիս գգգգված:

Իւայց ահա հիս փետուքների տեղ դուրս յեկան նո-  
րերը փայլուն, հարթ:

Ճնճղուկ՝ տրամադրությունը բացվեց

Ուրախ թռչկոտում ե, կովում սրա, նրա հետ.

Ախորժակը բացվել ե:

Մեկ ել գարնանն ե ճնճղուկը փո-  
խել իր փետուքները:

Աշնանը և գարնանը բոլոր թռչուն-  
ներն ել փոխում են իրենց փետուքնե-  
րը: Գարնան նոր փետուքները ավելի  
գեղեցիկ ե վառ գույների են լինում  
քան աշնանը:

Մի օանիսի սկ զգեստը փոխվում ե սպիտակի:

Աշնանը յեթե թռչունը մնա վառ գույներով, նա  
չի կարող անա թագնվել թշնամիների սրատես աչքից:  
Իսկ դեղնագույն և հողի գուշակ թռչունները հաւ տու-  
թյամբ պահպում են թշնամիներից և իրենց կյանքն  
ազատում:

Աշնանն ու գարնանը կենդանիներն ել են իրենց  
մազը փոխում:



## ԶՄԵԽՈՂ ԹՌՉՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԵՐ

### ՊԱՏՐԱՍՏԵՆՔ





Ճմեռող թռչունների զրությունը շատ ե վատանա-  
լու: Ցրտերը կընկնեն: Կեր չի ճարվի:

**ԹՌՉՈՒՆՆԵՐԸ ՄԵՐ ԲԱՐԵԿԱՄՆԵՐՆ ԵՆ, ՆՐԱՆՔ  
ՊԱՇՏՈԱՆՈՒՄ ԵՆ ԲԵՐՔԸ ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐԻՑ**

Յերեխաները պետք ե ոգնեն նրանց ձմեռն անց-  
կացնելու:

Կեր պետք ե հավաքել անանից:

Բարդ ի՞նչպիսի կեր:



Հավաքեցեք յեղինջի սեր-  
մեռը, նրանցով կկերա-  
կրեք խածկտիկներին:

Յանկապ ստերի մոտ, ա-  
րոտառեղերում բուսնում  
ե տատասկափուշ, կոա-  
տուր, աշնանը նրանց վե-  
րեվի մասերում հայնու-  
են սերմերը: Շատ հավա-  
քեցեք նրանցից.—կտաք  
յերաշտահավերին:


Հավաքեցեք ի՞նչքան կարող ոք յեղմնու և մայրի  
ծառի կոծոծներ, կտար —թռչուններին:

Հավաքեցեք սրջածառի, թխկենու փոքրիկ ճու-  
ղեր հատապուղներով:

Փնջեր կապեք, չորագրեք ստվեր տեղուի: Այդ հա-

տապառուղներով կը կշտացներ թանձրակտուցներն  
կեռնեխներին:

Սերմերը հասած ժամանակ հսկաբեցեր:



## ԹՌՉՈՒՆՆԵՐԻ ԶՈՒՆ

Այս իդ առաջ չվում են այ թուչունները, վարոնք կերւ կրվում են միջատներով, որինակ գեղեցիկ, գույնով գույնուն փետուրներով ՄԵԴՎՈԿՈԼՈ ԿԼԱՅ: Նրանցից հետո թուչում են՝ ՍՈԽԱԿԻ, ԿՈՊՏԱՓՈՒԾ, ԿՈՐՄՐԱՏՈՏՔ և ուրիշ միջատակերներ:



Արանք թուչում են փոքրիկ յերաներով առավոտ վաղ և վերջալույսին անդնում են անտառեց-անտառ,

ցերեկները թագնվում են վորոշ տեղիր և կերակրվում: Վայրի ԲԱԴԵՐՆ ու կտարուիրս աղմկով թուչում են լճերի և ճահճների սիջով: Ամենից ուշ չվում են ՍԱՐՅԱԿՆԵՐԸ, ԿՈՌԻՆԿԵՐԸ, ՎԱՅՐԻ ՍԱԳԵՐՆ ու ԲԱԴԵՐԸ և ուրիշ հատիկակեր թուչուններ:

Մի քանիսը թուչում են ցերեկներն աղմկելով ու կոկորդով, մյուսները սիայն յերեկոյան կամ գիշերն են ճանապարհում:

Թուչում են կանոնավոր ձևերով, յերաներով,

Յերամն առաջնորդում են փորձքած առաջնորդները. վորոնք մի քանի անգամ չվել են և գիտեն հարմար ճանապարհներ: Մի տեղ իջնում են կերակուր ճարեւու, մի տեղ ջուր խսելու, մի էրրորդ տեղ գիշերելու:

Յերբ մի առաջնորդը հոգնում ե նրան փոխարինում ե յերկրորդը, յերրորդը:

Բոլորը լսում են առաջնորդի կռողն այնպես, ինչպես հոկտեմբերիկները՝ կոլվարի հրահանգը մարզաւքի ժամանակ:

Յերբ իջնում են կեր գտնելու նրանք իրենց մեջ աշխատանքի բաժանում են կատարում. մի քանիսը պահապան են կանգնում, վոր թշնամին յերեալիս՝ մյուսներին զգուշացնեն: Հետո ելի բարձրանում են և թուչում ծովերի ու ցաւաքների վրայով:

## ՈՒԽ ԵՆ ԶՎՈՒՄ ԹՌՉՈՒՆՆԵՐԸ

Նրանք թուչում են տաք յերկրներ:

Յերբ մեզ մոտ ամեն ինչ ծածկված ե ձլունով, ախտեղ արեն ալում ե, ամառ ե:

Հացահատիկներով կերակրվող թուչունները շատ հեռուն չեն թուչում, նրանց կերակուրը հեշտ ե ճարվում, միայն թե ձլուն չլինի:

Միջատակերերը չվում են ավելի հեռու, ավելի հարավ, ուր կան միջատներ:

Զըերի մեջ կերակուր փնտողները ձմեռում են ախպիսի տեղերում, ուր գետերն ու լճերը չեն սառչում:


## Ա Յ Գ Ո Ւ Մ



Յերեխաներն աշխատում ելին:  
Նրանք հավաքում են թափված տերեն-  
ներն ու ալրում: Այդ տերեխների արան-  
քում շատ վսասառու միջատներ կան  
քնած, պետք ե նրանց վոչնչացնել:

Խնձորենու տերեխները արդեն  
թափել են, բայց են ինչ տերեխներ են  
խողովակների նման  
վոլորված, կտսկիխվել  
մերկ ճուղերից:  
Յած բերեք գրանց-  
ալրեցեք:

Դրանք միջատների բներ են, շի-  
նել են միջին ձմեռելու համար, վոր  
գարնանը դուրս գան խնձորենու տե-  
րեխներն ու պտուղները կրծեն, փշացնեն:



**ԹԻՌՆԵՐԱԿԱՆ ՇԱՎԱՔԸ ՎՈՐՈՇԵԼ Ե. ԱՄԵՆ ՄԻ ԹԻՌՆԵՐԻ  
ՊԵՏՔ Ե ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐԻՑ ՄԱՔՐԻ ՄԻ ԾԱՌ:  
ԴՈՒՔ, ՀՈԿՏԵՄԲԵՐԻԿՆԵՐ ՆՐԱՆՑԻՑ ՅԵՏ ԶՄՆԱՔ**



Ծղնոտից ողեր շինեցեք, կտ-  
պեք ծառերի բնին:  
Միջատները կարծելով, թե  
դա իրենց համար տաք ընակա-  
րան կլինի, կհավաքվեն նրա մեջ:  
Յրտերն սկսվեն թե չե, ցած

բերեք ալրեցեք:

## ԱՆՏԱՌՈՒՄ

Փչում ե քամին անտառի միջով,  
փչում աղմկում ծառերի վերջին  
տերեն ե պոկում:

Պոկում ու տանում...

Յեղանին ե վոր գույնը չի գցել,  
իր տերևներից նա չի զրկվել:

## ԶՄԵՌԸ ԳԱԼԻՄ Ե

Բոլորը պատրաստվում են:

Անտառում ամեն մեկը մի կերպ ե պատրաստվում ձըմ-  
ռանն ընդունելու:

Ով կարող եր, թուզվ, գնաց ցրտից ել, քաղցից ել ա-  
զատվեց: Ով մնաց, շտապում ե իր պահեստը լցնել ձմռան  
պաշարով:

Կան և այնպիսիները, վորոնք աշնան ամիսներին մեծ  
ախորժակով, կուշտ ուտում են, հաստանում, հաստանում, ճար-  
պակալում ու ամբողջ ձմեռը քնում:

Արդպես են արջը, վոզնին: Զղջիկը ձմեռը վորտեղից  
պետք ե միջատ ճարի վոր տպրի: Նա լետնի վշտներով, գլխի  
վտը կախվում է մի ապահով տեղ և ամբողջ ձմեռը քնում:

## ԶՄԵՌԱՆ ՊԱՇԱՐ

Ակլուոի մառանը՝ իր կլոր բուճն ե ծառի փչակում: Ան-  
տեղ նա դարսել ե՝ կաղին, ընկույզ,  
զանազան սերմեր: Իր ժամանակին նա  
սունկեր ել ե չորացրել անց ե կաց-  
րել կոտրած ճուղերի ծալրերին ու  
չորացրել:

Ձմեռը նա կթափառի ծառից ծառ  
ու կուտի չորացրած սունկերը:



## ՈՎ Ե ՃԻՇՏ ԱՍՈՒՄ

Մարտիկն ասում ե:


— Սկյուռը շեկ ե:

Իսկ Ռաֆիկը պնդում ե:

— Չե, շեկ չե, սպիտակավուն ե:

Յես ինքս եմ տեսել, յերբ սունկի եյի գնացել:

— Իսկ յես անցյալ ձմեռ պապիս հետ անտառ եյի գնացել փայտի: Յերկու սկյուռ տեսա, յերկուսն ել սպիտակավուն:



Տարվա վճր յեղանակին ե տեսել


Մարտիկը սկյուռին:

Իսկ Ռաֆիկը:

## ՆԱՊԱՍՏԱԿ

Նապաստակն ամառը կերակրվում ե խոտով և բանջարեղեն ե գողանում: Ձմեռը նա կրծում ե ծառերի կեղեր և մատաղ ճյուղերը: Նա այզիների և բանջարանոցների վնասատու յե:

Նապաստակը սպիտակեր, ձյունի նման եղառել: Թող գայլն ատամը սրի, ինչքան կուզի թող փնտոփի, ձմեռը ձյան յերեսին, Նապաստակին չի տեսնի:



Նապաստակի մորթին միայն գայլից ե ագատում նրան:

Վորսորդները յերբ են վորսում նապաստակներին և ինչու:

## ԴԱՇՏԱՅԻՆ ՄԿՆԵՐ

Հացը գնաց դաշտերից յերկու ուղղությամբ: Մարդիկ սայլերով տարան պահեստը, մկներն ել գետնի տակը:

Դաշտային մկները իրենց ձմռան բները շինում են ուղիղ հացի դեղերի տակ և ամեն զէշեր գողանում են հատիկները:


Գետնի տակ ունեն - ննջարան և մի քանի մասն:

Կան բներ, վորտեղ տեղափորվում ե 5-6 կիլոմետր ընտիր ցորեն:

ՊԻՈՆԵՐԱԿԱՆ ՀԱՎԱՔՈՒՄ ՎՈՐՈՇԵԼ ԵՆ ԱՄԵՆ ՄԻ ՊԻՈՆԵՐ  
ՎՈԶՆՉԱՑՆԻ 5 ԱՐՆԵՏ ՅԵՎ 10 ՄՈՒԿ:

## ՊԱՀՎՈՒՄ ԵՆ



Յրտում ե, ցրտում: Զրերն սկսել են սառել:



Զկներն ու խեցգե-  
տիններն իջնում են  
գետի հատակը:



Գորտերն ու մողեմնե-  
րը թաղվել մամուռի  
մեջ՝ քնել են:



Աձերը քնել են ծառերի արմատների տակ, պահվել  
են՝ թիթեռները, ճանձերը, մոծակները: Մըջյունները  
պինդ փակել են իրենց բարձր քաղաքի բոլոր դռները:  
Հավաքվել են իրար զիսի կույտեր կազմել:

| Ո՞վ ե քաղած | Ո՞վ ե քնած | Ո՞վ ե պաշար հավաքել |
|-------------|------------|---------------------|
| 1           | 1          | 1                   |
| 2           | 2          | 2                   |

Արջը, Նապաստակը, Վողնին, Գալլը, Զղիկը, Սկյուռը, Աղվեսը:

## Ի Ն Զ Ն Ե

Կապույտ յերկնքում են ինչ թռչուն ե,  
թևերը փռել, արևն է ծածկել:

## ԲՈՅՐԱԶ ՔԱՄԻՆ

Ամառվա յերեկոներին Արարատյան լաշ-  
տում ցերեկվա շոգից հետո, յերեկոները փչում  
ե սառը քամի, Բոյրազ քամին:

Նա փչում է Սևանա լճից և նրան շրջապա-  
տող լեռներից:

Մենք շարունակ դիտում ենք բնությունը  
և յեղանակացույցում նշաններ գնում:

Յեթե քամին թույլ ե, մենք նշանի մոտ  
գնում ենք՝ 0

յեթե միջակ ե՝ 1

յեթե ուժեղ ե՝ 2

## ԱԼԻԿՆ ՈՒ ԼԵԼԻԿԸ

Ալիկն ու Լելիկը քույր ու յեղբայր են:

Ալիկը ցույց է տալիս բրոջն իր յեղանա-  
կացույցը, իսկ Լելիկը կարդում է նրա համար  
իր հուշատերում գրածները:

## ԱՀԱ ԻՆՉ Ե ԳՐԵԼ ԼԵՂԻԿԸ

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 20-ԻՆ. Բոլոր գեղեցիկ փետուրներով, յերգիչ թռչունները չվել են: Մենք շահանք, ինչպես նրանք ճանապարհ ընկան: Նրանք թռել են գիշերը:


23 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ. Այսոր ցերեկն ու գիշերը իրար հավասար են.

24 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ. Անտառում տերևները դեղնել, կարմրել ու թափվում են:

28 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ. Այս գիշեր սաստիկ ցըրտեր յեղան: Մի բանի թփերի տերեներն այնպես են թափվել, կարծես դանակով կտրված լինեն:

5 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ. Այսոր բանջարանոցից տարան վերջին բանջարեղենները:

Մենք դիմավորեցինք կոլխօզի բանջարեղենների կարմիր արողք:



## Զ Մ ԵՌ

### ԶՅՈՒՆ Ե ԳԱԼԻՍ



գիշեր ե:

Շուտ վեր եմ կենում ու վազում դպրոց:

Դպրոցից գալիս եմ, ճաշում, ըիչ դռանը խաղում, մեկ ել տեսար մթնեց:

Գալիս եմ տուն, արդեն լույսը վասվում ե:

Զմեռը ցերեկը կարճ ե, բայց յերեկոն՝ յերկար: Դասերութեամբ պատրաստում, մայրիկին եմ ոգնում, կարգում եմ, յեղբորս հետ խաղում: Բայց ելի դեռ յերեկո՝ յե:

**ԱՄԵՆԻՑ ԿԱՐՃ ՑԵՐԵԿԸ ՑԵՎ ԱՄԵՆԻՑ ՑԵՐԿԱՐ ԳԻՇԵՐԸ  
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-ԻՆ Ե**

## ԶՄՈՒՆ ԱՄԻՍՆԵՐՆ ԵՆ

Դեկտեմբեր—31 որ

Հունվար—31 որ

Փետրվար—28 կամ 29 որ.

## ԻՆՔՆԵՐՄ ԻՄԱՆԱՆՔ

Կատարենք փորձեր ձյան հետ.

1. Յերբ ձյան բյուրեղները բնկնում են մեր շորերի վրա, նայեցեք, նրանք ի՞նչ են լինում:

Ուրեմն. ԶՅՈՒՆԸ ՀԱԼՉՈՒՄ ԴԱՌՆՈՒՄ Ե...

2. Վերցրեք մի բաժակ ձյուն, տարեք սենյակի ջյունը կհալչի: Ի՞նչքան ջուր կստացվի:

Ուրեմն. ԶՅՈՒՆԸ ԱՎԵԼԻ... ՏԵՂ Ե ԲՈՆՈՒՄ ՔԱՆ ԶՈՒՐԸ:

Գետակը ծածկվել ե սառցի հաստ շերտով,  
ել չի խոխոջում, ել չի քչըչում:

Վորտեղից ե գետի սառուցը:

Զմեռը գետի ջուրը սառչում ե դառնում ե...

## Փ Ո Ւ Զ

Եշի մեջ լիբը ջուր լցրեք և ցուրտ գիշերը դուրս դրեք: Ի՞նչ կլինի: Լրացրեք. ջուրը ցրտից դառնում ե...  
Ջուրը սառուցից... տեղ ե բռնում:  
Իսկ սառուցը ջրից... տեղ ե բռնում:  
(Ավելի շատ, ավելի քիչ սառուց):

## ՄԻ ՈՒՐԻՇ ՓՈՒԶ

Զյունը տափակացրեք և ձեռքերով պինդ, շատ պինդ սեղմեցեք:

Թափանցիկ չի դառնում:

Հնարավոր չե նույնիսկ կարդալ նրա միջով:

Սառած չի դա:

Ուրեմն. Յեթե ձլոնը ուժեղ սեղմենք, կստացվի...

## ԻՆՉՊԵՍ ԱՎԵԼԻ ՀԱՎ Ե ՄՆՈՒՄ ՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ



Ինքներդ փորձեր կատարեցեք.

Վհր շշի միջի տաք ջուրը ավելի յերկար ժամանակ տաք կմնա:

1. Շիշը դրված ե ձյան ենջ:



2. Շիշը դրված ե բակում գետնի վրա:

3. Փաթաթած ե չթի մեջ և դրած բակում:



4. Փաթաթած ե մանուդի մեջ:

Շարունակում ենք ընության դիտողությունները.

Ամսի վերջին այսպիսի դիտամբ ենք կազմում:

## ԶՄԵՌՈՂ ԹՐՉՈՒՆԵՐԸ


Դիտեցեք ձմեռող թռչուններին՝ ագռավներին, կաչաղակներին, ճնճղուկներին:

Նայեցեք ի՞նչպես են նրանց փետուրները ձմռանը:

Ի՞նչպիսի կտուց ունեն, ի՞նչպիսի վոտքեր:

Համեմատեցեք ազռավին ճնճղուկի հետ:

Ճեր դիտողությունների մասին պատմեցեք դասարանում:



## ԱՐՓԻԿԻ ԴԻԾԱՆԼ



Մի բան շարժվեց: Յես կանգնեցի, Նայում եմ, ճյուղի վրա տեղափորվել են մի խումբ ձնձուկներ: Փքվեչ կլորացել, վետուրները ցից՝ հանգիստ ննջում են:

## ՊԱՐՏԵԶԼ ԶՄՈՒԱՆԼ

Պարահզում բոլոր ծառերը մերկ են:

Միայն յեղենիները և մայրի ծառերն են կանակ մնացեր: Ծառերի վրա յերեւում են տղուազների և զիլապավների բներ: Մենք ճյունը յետ տպինը և նրա տաճանանք: կանաչ, ճլորած խոտ: Զյունը գերմակի նման ծածկել եր խոտին, և նա չեր սառել:

Ստուգեցեք յերեխաների տառածը: Գնացեք այզի կամ անտառ, տեսեք տակին խոտ կա:

Մտածեցեք, Բնչու ձյան տակի խոտը չի սառել:

**ԻՆՉՊԵՍ ԵՆ ԶՄԵՌՈՒՄ ԲՈՒՑՍԵՐԸ**  
Ծառը մերկացել է: Բայց նա ծածկված ե կեղեռով: Ծառի կեղեռը պաշտպանում է նրան ցրտերից:

Ծառի վրա կան պառկներ: Գարնանը սըանցից տերեներ դուրս կգան:

Շուրջս սպիտակ, — յես կանաչ, շուրջս ցուրտ ե՝ ես առույդ: Տերեներս առեղի, Անունս Բնչ ե...



## ՍՈՆԱՆ ՏԱՔԱՆՈՒՄ Ե

Մենք այսոր բրիգադով գնացինք կոլտնտեսության գամը նայելու՝ արդյոք մաքուր ե, տաք ե:

Սուրիկն ել մեզ հետ եր:

«Ինչ լավ ե այստեղ—լույս, տաք:

Մեր գոմը մութն ե, խոնավ, ցուրտ:

Խեղճ Սոնան հիմա մրտում ե,— մտածում ե Սուրիկն ու խղճում իրենց կովին:

— Կիմ, այ կիմ, Բնչ կլինի մեր Սոնին բերենք մի քիչ տաքանա, մայրիկը տանը չի.


Գնացինք Սոնի յեղջյուրներից մի թոկ կապեցինք ու բերինք կոլտնտեսության գոմը:

Յեկավ քեռի Կարոն կովերին կերակրելու: Տեսավ Սոնին ու ծիծաղելով ասաց.

— Ես Բնչ բան ե. կովերն իրենք իրենց են կոմունա գալիս:

— Եղ մեր կովն ե, քեռի Կարո, ասաց Սուրիկը.—բերել եմ՝ քիչ տաքանա:

Մայրիկիս յես կհամոզեմ, վոր թողնի նրան այստեղ: Մենք ել կոլտնտեսություն կմտնենք:




Ահա կովերի հանրակացարանը:  
Բարձր, մեծ, աղբուսից շինած շենք եւ:

Ամբողջ գլուղի կովերին բե-  
րում են այստեղ:

Սպիտակ խալաթ հազած կա-  
նայք խոզանակ-  
ներով մաքրում,  
շփում են կովերի մեջքը:

Դպրոցի աշակերտները կերի  
հաշիվս են գրում:



Կովերիդ մեկը հիվանդանում  
է, գալիս ե բժիշկը նայում:

Ինչ շինվել ե այս գոմը, կովե-  
րը լերկու անգամ ավելի կաթ  
են տալիս:

Ահա վագոնիկը ռելսերի վրա-  
յով քուսպ ու ճակսղեղ ե բե-  
րում:

Յեթե պատա-  
հում ե փոք



Տեսէք ինչպես են վրա պրծել ծիտիկները, կացում  
են հացի փշրանքները:

Բա գուօ ել չե՞ք ուզում այդպիսի սեղան շիներ  
ծտերի համար:

Ցուրտ ե: Խեղճերը սոված դես են թուչում, դեն  
վոչինչ չեն ճարում:

Ամեն տեղ ձյուն ու սառույց:

Սեղան շինելը դժվար չե: Լավ նայեցեք, դուք եք  
կշինեք:

Տալիս ենք հացի փշրանքներ, մեր նախաճաշի մնա-  
ցորդները, ով ինչ կարող ե:

Շինեցնք, շինեցնք ամառը նրանք լավության տակից  
դուրս կդան մեր այգիների, բանջարանոցների վորդե-  
րին ու մասսատու միջատներին կուտեն կոչնչացնեն:

Ծիտիկների համար եղի սեղաններ ենք  
պատրաստում:

Կարս մեխ հասցրու ե, մեխ,—կանչում ե  
Ռաֆիկը:

Կարոն հատակին չոքել, մուրճով ուղղում ե  
ծոված մեխերը ու տալիս նրան:

Կիմն ու Նունիկն ել թելեր են վոլորում:

— Ես մեկը պատրաստ ե, անկյունները  
պետք ե ծածկել վոր թելերն անցկացնենք ու  
ծառից կախենք, ասում ե Ռաֆիկը,՝ Սուրբիկ,  
Սուրբիկ, սի բուրդին տուր:


— Բուրդինը ձեռիս ե, — ասում ե Սուրբիկ:

— Բա յես պարապ սպասեմ, ի՞նչ ե, տնտը  
քեզ ասում եմ

Եղ ի՞նչ ե պատահել, — մոտեցավ ուսուցչու-  
հին, — պետք ե մտածել գործիքները շատացնե-  
ու մասին և վոչ թե կովել:


## ԶՄՈԱՆ ԱՆՏԱՌՈՒՄ

Սկյուռը ճյուղից ճյուղ ե թռչկոտում. Ծա-  
ռի փշակում մամուռ ե փռել, իրեն բուն շի-  
նել: Այնտեղ աշնանից կաղին ու ընկույզ շատ  
և հավաքել հիմա քաղցած չե:



Ներքեռում նապաս-  
տակն ե թփերը խըժ-  
ում:

Իսկ խորամանկ աղվեսը զգույշ շատ զգույշ  
առաջ ե շարժվում  
— Սա... խշում են չոր ճյուղերը...



առել:

Այդ գայն ե վազում  
պոչը կախած:

Ծառերի հետեւում  
վորսորդն ե պահվել  
հրացանը ձեռքին:

Շունն ե, ականջ-  
ները սրել գայլի հոտ



Արջն իր վորջում  
խոր քուն ե մտել:  
Մայր արջն ել քը-  
նած ե քոթոթների  
հետ մի ուրիշ վորջում։  
Մուտքն ամուր փա-  
կել ե։ Զյունն ել վե-

րեից վորպես սպիտակ վերմակ ծածկել ե նրանց  
մինչև գարնան դալլ։

Ով ՌԻՄ Ե ԲԽՆԵԼ

- Արջ եմ բռնել...
- Դե բեր այստեղ։
- Զի գալիս, ե...
- Դե դու արի։
- Զի թողնում, ե...

Իմացեք, ել ինչ կենդանիներ են ձմռան-  
քուն մտնում։

Իմ հորեղբալըն ունի վորառզական՝ հրացան և պայտառակ։  
Նա ունի և վորսի շներ։ Մի որ հորեղբալըն վերցրեց հրացանն  
ու հարցրեց։

— Ուզում ես ինձ հետ վորսի գար։ Անպիտան աղվեսն  
ելք մեր լերկու համբն տարել ե, պետք ե նրան սպանել։

Մենք դնացինք, մեղ հետ վերցնելով լերեք վորառզական  
շուն։ Նրանք շուտով  
գտան գաղանի հետ-  
քերը և կորան՝ ան-  
տափ մեջ։ Մենք  
միան լուսմ ելինք  
ինչպես նրանք,  
կարծես հրահանգով,  
հաշում ելին, հափ,  
հափ... Բայց ահա  
հաչոցը ավելի ու  
ավելի մոտեցավ։

Թփերի միջից  
միջից միջից

գուրս թռավ նապաստակը, նրա լեռեից ել շեկ աղվեսը։

### ԼԵՆԻԿՆ ՈՒ ՄԱՄԱՆ

— Մամա ջան, ինչ լավն ե ոձիքիդ այդ մորթին։ Թող  
շոյեմ, ինչ փափուկ ե, փալլուն, ու...


Վորտեղից ե այդ մորթին, մամա։

— Մեզանից, այն կողմը, հյուսիս արևելքում գտնվում ե  
Սիբիրը։ Այնտեղ մեծ անտառներ կան փշատերեւ ու սաղար-  
թավոր ծառերով։

Այդ անտառներում ապրում են ամեն տեսակի թափամազ  
կենդանիներ։ Վորսորդները վորում են նրանց, իրենց թան-  
գարժեք մորթիների համար։

Մորթիներից վերաբերներ, գլխարկներ են կարում։ Ար-  
տահանում են նաև արտասահման։

Իսկ փոխարենը ինչ են բերում արտասահմանից։



## ՀՅՈՒԽԱՓԱՅԼ (ՆԱՄԱԿ ՀՅՈՒԽԻՄԻՑ)

ՄԵՆՔ յեկանք Մուրմանով: Յես տիտուր եյի: Յես նոռնիսկ յաց յեղա: Բայց հայրիկս ասում եր: «Վոչինչ կառվորես»: Ապատեղ ել են մարդիկ ապրում»: Յեվ յես սովորեցի:

Այնպէս գեղեցիկ և հյուսիսափայլը: Յերկնքի վրա կարծես հրդեհ լինի: Յես սկզբում վախեցա, չելի ուզում նայեր: Իսկ հետո սովորեցի: Հիմա նայում եմ մեծ հաճույքով:

Մեզ մաս յեղջերուներ են լծում: Քաշում են շատ արագ: Բայց յես խղճում եմ յեղջերուներին, նրանք այնքան գեղեցիկ են:

Մի անգամ յես և յեղբայրս փորձեցինք մեր շանը լծել սահնակին և սահեր:

Մեր այդ շան անունը Հյուսիս ե: Նա մեծ ե և ուժեղ: յուսիսին մենք լծեցինք սահնակին: Նա հանդիսաւ կանգնել եր:


Յես նստեցի: Հանկարծ Հյուսիսը տեսավ մի կատվի ու վաղեց նրա յետեից: Իսկ յես վայր ընկա, քիթոս թաղվեց ձյան մեջ:

Մենք ել չենք լծում Հյուսիսին:

Հայրիկը պատմում ե, զոր մեզանից հյուսիս Նեմեցներն են ապրում լուրտերում:

Ել ամելի հյուսիս գետինը ծածկված ե մշտական ձրւնով ու սառուցով: այստեղ բռնառում ե միայն մամուռ, յերկում ևն մեկ-մեկ գաճաճ ծտոեր:


Իսկ ամենահեռու հյուսիսում 6 ամիս գիշեր ե լինում, և ամիս ցերեկ:



Հեռու հյուսիսում միշտ ձմեռ ե: Այստեղ ամեն ինչ ծածկված է հաստ սառցով: Վոչ մի կերպ առաջ գնալ չի լինում:

Յեվ ահա մարդիկ սովորեցին կառուցել թուզող մեքենաներ՝ աերոպլաններ, գիրիֆարներ: Դիրիժարլը—մեծ ոդանավ ե:


Մարդիկ ցանկացան համնել ամենահեռու տեղ, մինչև Հյուսիսին ընեռ:



Մի անգամ թռան գեպի հյուսիս իտալացիները:

Հանկարծ բարձրացավ սոսկուի քամի:

— Փոթորիկն սկսվում ե, տաց նավապետը:



Վերջին անգամ նա ուղղիուզ լուր ուղարկեց, զոր գիրիֆարլը ընկել և փոթորիկի մեջ:

Ու ել վոչ մի տեղեկություն գիրիֆարլի մասին:

Վորտեղ ե նա:  
Ի՞նչ ե յեղեկ:

Վոչինչ հայտնի չե:  
Անցնում ե՛ մի որ,  
լերկու որ,  
լերեք որ,  
վոչ մի լուր:  
Պետք ե՛ փրկել մարդ-  
կանց:

Ի՞նչպես:

Գանվեց աշխարհում  
ամենառութեղ սառցահա-  
մբ Խորհրդագին սառցա-  
հատ — «Կրասինը»: Նրա համար սարսափելի չեն սառուցները,  
նու պատած ե՛ պողպատով:

«Կրասինի» վրա ճանապարհ ընկավ լեզ համարձակ ողա-  
չու Չուխնովսկին:

Գնացին: Վոր կողմդ նախու—սառուց, սառուց, սառուց\*  
Բայց «Կրասինը» ուժեղ եւ Սառ-  
ցադաշերը ճանապարհ տվին «Կրա-  
սինին»:

Քանի առաջ են գնում, այնքան  
ավելի՝ հաստ ու ամուր ե՛ սառուցը  
կանգնեց «Կրասինը»: Վոչ առաջ, վոչ  
լետ:

Ի՞նչ աներ:


Չուխնովսկին պետք ե՛ թոչի:  
Նստեց Չուխնովսկին աերոպլանի  
վրա և թռավ:

Բարձր, ավելի բարձր, ել ավելի բարձր, թռչում ե՛ Չուխ-  
նովսկին ու նախում, չեն լերկում արդիոք մարդիկ:

Յեվ տեսնում եւ սառցակույտերի վրա լերկու մարդ: Հա-  
կառակի պես աերոպլանը դիպավ սառցի բլուրին և նրա լեր-  
կու պառուտակները կոտրվեցին:

Չուխնովսկին ոտքիուվ հայտնեց.  
«Թռչել չեմ կարող: Ազատեցեք իմ տեսած մարդկանց:  
Հետո լեկեք մեր լետից: Մի կերպ կդիմանա՞ք»:

Ելի «Կրասինը» սկսեց իր կոիվը հսկա սառուցների հետ:



«Կրասինը» գտավ այն լերկու-  
ախ լեզ հետո ելի չինդ մարդ:  
Մարդիկ համարյա մեռնում ելին  
քաղցից ու ցրտից: Հետո կրասի-  
նը գնաց գտնելու: Չուխնովսկիուն  
և շուտով գտավ:

Ողաչուները պատմեցին թե  
ինչպես են ապրել լիրենք արդ ժամանակամիջոցում սառուց-  
ների վրա: Ցուրտ եր, քնել չեր լինում: Կպառկես մի 10 ըովե-  
նիքնաթիռում հետո ելի դուրս կթոչես, վազվելով տաքտ-  
նալու:



Տանջվեցին մարդիկ  
Վերադարձավ «Կրասի-  
նը» Լենինգրադ: Նրան դի-  
մավորեցին նվազով, լերգով-  
Աշխարհով մեկ հայտնի դար-  
ձավ «Կրասինը»:

## ԵՍՔԻՄՈՍՆԵՐԸ

Հյուսիսում տպրում են եսքիմոսները: Նրանք ձևան հաստ-  
շերտերում խոր փոս են փորում ու վերեկց կոր փոփ նման-  
սենակ շինում: Ներսի պատերը սվաղում են թաց ձյունով,  
փորն անմիջապես ստոչում եւ կտուրի մի մասը ծածկում են  
թափանցիկ սառուցով, լուսի համար: Այստեղ չ մարդը մի-  
լերկու ժամում կարող են աղղախի մի տուն շինել: Տուն մըտ-  
նելու համար նրանք սողում են մի ճեղքով, վորի բարձրու-  
թունը 1 մետր եւ:


Սենյակի մի մասում զանգում ե՛ կոխ տված ձյունից ան-  
կողին, չոր ուսենու ներքնակով, իսկ վերմակի փոխարեն փո-

Դի կամ յեղջերուի մորթի։ Անկողնից քիչ հնուու շինած ե մի ձլունե սլուն, վարի վրտ դնում են ճրագը։ Ճրագի մեջ տպ-վում ե փոկի ճարպը, պտտրույգն ել չոր մամուռից եւ ճրա-գի վերևը կախված ե կավե կճուճ, միջին փոկի ստուծ միտ ճրագի ջերմությունը տվելի շուտ հալեցնում ե, քան յեփում նրանց ճաշը։ Սենյակը լիքն ե լինում ճրագի ծխով ու հոտով։

## Տ Ե Ս Ե Ք

Հեռու հյուսիսում հրաշք-  
ներ են կատարվում հիվանդ-  
ներին—բժիշկներ, Յերեխանե-  
րին—դպրոցներ։ Ելեքտրա-  
կան լույս, ռադիո...

Մոսկվան կապվել ե հյու-  
սիսի հետ։




## Զ Ն Ե Յ Ո Ւ Թ Ը

Այսոր այնպես լով ե փողոցում։ Զյուն ե գոլիս, բայ-  
ցուրտ չե։

— Յեկեք ձլունից լուրթ շինենք, — առաջարկեց Ա-  
շիկը։

— Յուրթ շինենք, լուրթ շինենք...

Սկսվեց աշխատանքը։ Յերեխաները արագ, արագ ձլունից  
ողյուներ պտտրաստեցին։ Շրջան գծեցին, պտտերը դրին  
հերքեում լախ, վերև նեղ։



Ահա և յուրաքանչ ե-  
— Լով կլիներ լուսամու-  
տին ապակի գցելինք։  
— Ապակի, վհրառեղից ճա-  
րենք մտածում են յերեխա-  
ները։

— Ա, զտա։ Մենք ապա-  
կին սառուցից կշինենք։ Անիկ ջան, Անիկ, մի վազիր, են, վոր  
մաման միջին խմորեղեն ե թխում, են ամանը բեր...

Ամանը բերին ջուր լցրին մեջը։

— Աչ, ես ջուրը վոր սառչի, սառուցից մենք ապակին  
կշինենք։

Ինչպես սառուցից ապակի  
պտարաստել։

Թիթեղի տափակ ամանի մեջ  
ջուրը սառեցրեք, հետո մի  
յերկու բողե դրեք վառարա-  
նի վրա, լեզր տակից սառու-  
ցը բիչ հալչի, ամանը զգուց

շուռ տվեք։ Կստանաք մի ամբողջ կտոր փայտուն, թափան-  
ցիկ սառուց։ Կարող եք և գունավոր ապակիներ ստանալ։ Դրա-  
համար պետք ե ջուրը սառեցնելուց առաջ քիչ ներկել։



## ԲԵՎԵՌԱՅԻՆ ԱՐՁ

Հյուսիսում ապրող արջերն սպիտակ գույն են ունենում։  
Նրանք ջրի մեջ լով լողալ գիտեն։ Զկներ են վորսում և ու-  
տում։

Բեկուային սպիտակ արջերը ձմռան քուն չեն մտնում։

Արջերի տված վնասներն համարյա հավասար են նրանց  
տված ոգուտներին։ Նրանց մորթին չատ գնահատելի չե, միսը  
մարդիկ ուտում են, իսկ վոսկորներն ու ջերը ոգտագործում  
են ուրիշ բաների համար։

## Ա Ղ Վ Ե Ս

Աղվեսը խիտ բրդու մորթի ունի, թափամազ պոչ:  
Վոտները բարակ են և կարճ, դունչը լերկ է:

Մորթու գույնը շեկավուն է:

Աղվեսը կերակրվում է մանր կաթնասուններով, միներով  
քաց ամենից շատ սիրում ե թռչունի միս: Հավերի տերերի  
համար նա շատ վնասակար կենդանի է, իսկ անտառի, դաշտի  
ու մարգագետինների համար նա ոգտակար է:


Աղվեսն իր բունը շինում է շատ ապահով տեղ, ունենում  
է 3-12 հատ ձագ և մեծ խնամքով պահում է նրանց: Աղ-  
վեսներին վորսում են նրանց թանգարժեք մորթու համար:

Աշխատում են թակարդով կենդանի բռնել:

Բնեռային աղվեսը բոլորովին սպիտակ գույն ունի: Բացի  
մարդուց նրան թշնամի էն և բնեռային արջը, և ծով. ար-  
ծիկը:

Սպիտակ աղվեսին կարելի է շան նման ընտանի գարձ  
ներ նրա միսը չեն ուտում, համեղ չե:

## ՏԱՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ ԳԱԶԱՆՆԵՐԸ




Ակատելը:

Աա գետաձի յե: Ամ-  
բողջ որն անց ե կացնում  
ջրի մեջ: Ինքը պահպում  
է, քիթը դուրս հանում,  
շնչում:

Յերբ շուրջը լուռ ե,  
նա ափ ե դուրս գալիս  
արածելու:

Աղմուկ լսի թե չե, իսկույն ելի ջուրը կվաղի:



անտառում:

Մեծ հոտերով նրանք թափառում են թափուտնե-  
րում և արածում:




Իսկ սա փիղն ե: Նրան ըն-  
տանի դարձնելը հեշտ ե:

Ընտանի փիղը մարդու ոգ-  
նականն ե.

Նա գերաններ ե դարսում,  
ծանրոցներ տեղափոխում:

Վայրի փղերն ապրում են




Սա առյուծն է  
ջերեկը նա բր-  
նում է, իսկ գի-  
շերը զուրս է գա-  
լիս վորսի. Առյու-  
ծը կարող է թա-  
թի մի հարվա-  
ծով յեղ սպանել-  
նանից դժվար է պահպանել նախիրը:



Սա վագրն է: Առյուծի նման սա յել վտանգավոր  
է: Վագրի մորթին շերտագոր է, խոտի մեջ միանգամից  
չի նկատվում: Նա հանկարծ նետի նման զուրս է թրո-  
չում և խփում զոհին իր սոսկալի թաթով:

## Վ Ա Ռ Ա Ն Ն Ե Ր



դադում:

Վաղուց, շատ վաղուց, ով  
գիտե՝ ինչքան մեզանից  
առաջ, ձմբան ցրտին այ-  
րերի մեջ մարդիկ խա-  
րույկ եյին վառում, շուր-  
ջը հավաքվում ու տաքա-  
նում: Ծուխ եր լինում  
այրում, վատ հոտ: Այս-  
տեղ ծածկոց — մորթին  
խանձրում, պեծք թոշում  
մեկ ուրիշի ծունկն եր



Անցան դարեր ու տա-  
րիներ. ու ամեն ինչ ան-  
ցագ, փոխվեց: Մարդիկ  
կավով փուռ են շինում,  
մարդիկ կավից թոնիր ծե-  
փում, ճաշ են յեփում,  
հաց են թխում:

Թոնիրն առանց ծխնե-  
լույզի եթ ե մնում մար-  
դու խեղդի:

Ելի անցան տարիները,  
Ելի փոխվեցին տները:

Մարդիկ հիմա շինում են  
վառարաններն՝ աղյուսից:

Ամեն տեղ մաքուր է, տաք,  
Բայց թե ինչքան աշխատանք...



Փայտը կոտրիր, վերև տաք,  
Ելի եջիր, եկի տաք...



Դարերն անցնում են,  
որերը թոշում, ելի ամեն  
ինչ անցնում է, փոխ  
վում:

Տների տակ նկուղնե-  
րում, ջուրն է յեռում  
կաթսաներում:

Խողովակներով հոսում է. ու գոլորշին տաքու-  
թյունը ամենքին ել հասցնում է:



### ՏԱՐԲԵՐ ՀԱԳՈՒԱՏՆԵՐ

Ուրախացեք, յերեխաներ,  
այսոր ենքան ձյուն ե  
յեկել:  
  
Յուրտ ե դրսում,  
Բայց ի՞նչ հոգ.  
Տաք վերարկու  
կհագնենք  
Կրկնակոշիկ, ձեռնոցներ:  
Փափուկ գլխարկ  
կծածկենք,  
ու սղղալու  
կվազենք:

### Պուրգա քամին

գազազել,  
թիփի բորան ե արել:  
Զյուն ե, ձյուն ե ամեն տեղ:  
Նեմեցներ են, տես, այստեղ:  
Յեղջերուներ են լծում:  
Ես ել Տիկոն ե փոքրիկ:  
— Տիկո, ասա, չես մըսում:  
— Ինչու պիտի յես մըսեմ.  
Իմ հագինը տաք դոխ ե,  
յեղջերույի մորթուց ե,  
կոշիկ, գլխարկ, թե ձեռնոց,  
փափուկ մորթուց ե կարած:







— Այ փոքրիկ խափշիկ,  
 դու փոքրիկ խափշիկ,  
 վերարկուդ հագիր,  
 թե չե, կմըսես...  
 Զարմացել ե փոքրիկ թոմը:  
 — Ի՞նչ վերարկու, ի՞նչ մըսել:  
 — Փոքրիկ խափշիկ,  
 փոքրիկ խափշիկ,  
 դե հագիր կրկնակոշիկ:  
 — Կրկնակոշիկ:  
 Ծիծաղում ե փոքրիկ թոմը,—  
 մեզ մոտ շոգ ե,  
 մեզ մոտ արև,  
 շուրջո կանաչ,  
 ծաղիկ, տերև...  
 Գնում եմ յես լողանալու,  
 սառը ջրում զովանալու:

## ՀԱԳՈՒՍԻՄԱՍԻՆ

Տրակտորը դաշտը վարեց,  
 շուրջացանը բամբակ ցանեց...  
 Բամբակից շատ բերք ստացվեց:




Բոլոր բամբակը հավաքեցին,



Գործարանում լավ մաքրեցին ու գգեցին,  
 մեքենաներով մանեցին ու տեսեր,



Ինչքան սպիտակ թել ստացվեց:  
 Իսկ թելերից մաքուր ու նուրբ.  
 Հիթ ու սատին են գործում,  
 գործում են ու մեզ ուղարկում,  
 գործում են ու ձեզ ուղարկում:



Ամառը շոգին  
չիթ ե մեր հագին,  
իսկ ձմռան ցրտին.—  
բումազեյ փափլիկ:

**Խնչ կտորներ են գործում բամբակից, վուշից, բըղից։**

### ՎԵՐԱՐԿՈՒԻՆ ԶԻ ՏԱՔԱՑՆՈՒՄ

Բակում խաղում են յերեխաները։ Այնտեղ յերեկվանիք կանգնած ե ձնե մարդը։

- Մերկ ե.—ասում ե Հեղուշը։
- Յեկեր վերարկու հազնենք, թող տաքանա։
- Իսկ յեթե հալի...



— Վոչինչ, փորձենք։

Հեղուշը բերեց իր անցյալ տարվա տաք վերարկուն։  
Մի կերպ հազցրին ձնե մարդուն։

Թող տաքանա։

Իսկ իրենք գնացին ձնագնդի խաղալու։

Յերկար խաղացին։ Իսկ ձնե մարդը կանգնած ե անփոփոխ, սկի ել չի հալվում։

— Այ քեզ բան, ասում ե հեղուշը, — իմ վերարկուն էին չե, միայն ինձ վրա փոքրացել ե, ինձ ենպես լավ տաքացնում եր։

Իսկ ինչու ձնե մարդուն չի տաքացնում։

— Նշանակում ե վերարկուն չի տաքացնում, քիթի տակ ծիծաղեց կիմը։ Եա արդեն յերկրորդ խմբումն ե Շատ բան գիտե կիմը։

— Բա ինձ ինչու յեր տաքացնում, պնդում եր Հեղուշը։

— Քեզ ել չեր տաքացնում, — ելի ծիծաղում ե կիմը։ Հեղուշը զարմանում ե։

— Լավ, բա ել ինչու յեն մարդիկ ձմեռը տաք վերարկուներ հագնում։

Հագնում են, Հեղուշ. Նրա համար, վոր մարմնի տաքությունը դուրս չգնա։ Մարմինը տաք ե, վերարկուն չի թողնում. այդ տաքությունը հեռանա նոանից։

Մորթին թափամազ ե, բամբակն ել թելիկներ ունի։ Այդ մազերի ու թելիկների արանքում շատ ող կա։ Ողն ե վոր բաց չի թողնում մարմնի տաքությունը։

Չնե մարդը տաքություն չունի, ինչը պիտի նրանից հեռանա։ Նրան վերարկուն չի տաքացնի։

Հիմա զե ասա, Հեղուշ, դու յես վերարկույիդ տաքացնում, թէ նա քեզ։ — Բացատրում ե կիմը։

### ԱՊԱ ՊԱՏԱՍԽԱՆԻՐ


1. Ինչու ձմեռը լուսամուտներին կրկնակի փեղկեր են դնում։
2. Ինչու ձմեռը հագնում են փափուկ շալի կամ բումազեյ կտորներ։
3. Ինչու ձմբան վերարկուների տակ բամբակ են դնում կամ մորթի կարում։
4. Ինչու, յերբ գուլպաները կեղտոտ են լինում, վոտքերը մրառում են։
5. Ինչու ձլան տակի խորը չի սառչում։

## Գ Ա Ր Ո Ւ Ն




### ԱՇԽԱՐՀԻ ԿՈՂՄԵՐԸ

Արևելք ե այնտեղ, ուր արևն  
ե ծագում։  
Արևուտք ե—այնտեղ ուր  
արեր մայր ե մտնում։  
Կանզնիր յերեսդ դեպի արե-  
վելք,  
աջ կողմդ կիխի հարավ,  
իսկ ձախը—հյուսիս։



Կտուրի մի կողմում ձյունը  
հալվել ե, մյուսում—վոչ։

Վոր կողմի ձյունն ե հալվել։  
Ինչու մյուս կողմի. ձյունը մնացել ե։



Գետի մի ափի ձյունը  
հալվել ե, մյուսինը—վոչ։

Քարնան ամիսներն են

1. Մարտ 31 որ
2. Ապրիլ 30 որ
3. Մայիս 31 որ.

### ԲՆՈՒԹՅԱՆ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

#### Մ Ա Ր Տ Ի 16-ԻՆ

Յերբ յես դպրոց եյի գնում, բոլոր լճացած ջրերը  
ծածկված եյին սառուցով։

Յերբ յես դպրոցից տուն ելի գալիս, բոլոր սառուց-  
ները հալել եյին։ Առուների ջրերը հոսում եյին։

Յերեկ փողոցներով սահնակներ եյին գնում, այսոր  
կառքեր են յերեսում։

Մի քանի որ առաջ ամեն ինչ ծածկված եր ձյունով.  
Հիմա մերկ քարեր են

Դիտեց՝ կարլեն Սուրենյան

Մարտին մարդիկ սառուց են ամբարում, կուլա-  
ները—արցունք թափում։

Գետի սառուցը տանում են. ինչի՞ համար են  
տանում։

Ամառը սառուցը շատ ե պետք գալիս, ցրտից միսը  
չի փշանույ, կաթը չի թթվում, յուղը չի դառնանում։

Դեղատներում միշտ սառուց ե պետք հիվանդնե-  
րինել ե պետք։

Ամառը զովացնող խմիչքները սառուցի մեջ են  
պահում։

Քարունը գալիս եւ. Այսոր մենք պարտեզում տեսանք տուլաշներին:

Ուսուցիչն ասել եւ, վոր նրանց վերադարձը գարնան գալու նշանն եւ:

Դիտեց՝ Ոսիկ Պետրոսյան:

Առաջադրություն 1. Ընտրեցեք այգում մի բագ տեղ՝ չինդ որը մի անգամ չափեցեք ձևան շերտի հաստությունը. Իմազեք ինչքանո՞վ եւ պակասել:

2. Չափեցեք տարբեր տեղերի ձյան հաստությունը. բաց դաշտում, ձորում, անտառում:

Համեմատեցեք, վորտեղ ավելի ձյուն կա, վորտեղ պակաս:

Ինչու յեւ արպես.

3. Յեղանակի որացույցում նշանակեցեք գետի սառուցը յերբ շարժվեց. 1. գետի վոր մասում սառուցի կտորներն ավելի արագ են հոսում. ավերին մոտիկ թե գետի կես տեղում: 2. Սառցի կտորներն ինչ են բերում: 3. Ի՞նչ են բերում գետը:

4. Դիտեցեք գետի ափերը վարարումից հետո:

5. Փորձեցեք հիշել այս տարի յեւ գետը շատ վարաբել, թէ անցյալ տարի:

## ՈՒԽՄ ԱՇԽԱՏԱՆՔՆ Ե

Ես ինչ բան եւ. — զարժանում են կայուսը. — յերեկ յես թոշում եյի առվի վրայով, եսոր չեմ կարողանում, այնքան լալնացել եւ:

Կայուսը նայեղ առվին, նրա միջօվ արագ հստում էք գարնանալին պղտոր ջուրը:


Կայուսի վուաքի տակից պղկվեց մի յեծ հողի կոշտ.

— Ընդու... այ թե ի՞նչ. — մտածեց կայուսն, պղղեց ջրի ափին ու սկսեց ուշադրությամբ զիտել:

Զուրը հոսում եր, պղկում ափերից հողի մեծ ու փոքր կտորներ, տանում:

— Գիշերն ով գիտե ինչքան այսպիսի կտորներ ետարել ջուրը, դրա համար ել առուն լայնացել եւ. — զիսի ընկավ կայուսը:

Զուրը քանդել եւ ձորի ափը:



1. Կամուրջը  
քանդվել եւ.

2. Մառը  
ընկել եւ.

3. Պոկվել եւ մի  
կտոր վարելահող

Առաջադրություն. 1. Գնացեք ձորի եւ գետի մոտ. Դիտեցեք, ինչպես վարար ջուրը քանդում եւ ափերը. Ի՞նչ են բերում իր հետ. Ի՞նչու վորար ջուրը պղտոր ելիսում:

2. Ի՞նչ են անում մարդիկ գետի ափերն ամբաջնելու համար:

Երսկուրախայի ժամանակ զգուշ յեղեք, Ջրին շատ չմոտենաք:

## Ծղնոտի գորզը

— Շողիկ, եղ ինչ ես անում։  
— Մորաքույր ջան, դուրսը ցեխ ե, գորդ  
եմ գործում, վոր դռան առաջ զցենք, վոտքեր-  
նիս սրբենք։

Դպրոցում ենքան պատրաստել ենք, ամեն  
խմբակ ունի իր դռանը։ Մի-մի հատ ել նվիրել  
ենք գյուղառնորդին ու խրճիթ-ընթերցարանին։  
— Դե վոր եղակես ե, Շուշիկ ջան, թել կը-  
տամ մի հատ ել մեզ համար շինեցեք։ Ասում ե  
մորաքույրը։

— Շատ լավ, մորաքույր, ծղնոտ մենք շատ  
ենք հավաքել, վոր թելը տաս կպատրաստենք.  
համաձայնվեց Շողիկը։

ՅԵՐԲ Ե ԼԻՆՈՒՄ  
Զյունն ե հալչում,  
խոտը կանաչում,  
ծաղիկը ծաղկում,  
որը յերկարում.  
Այս յԵ՞րբ ելինում։

մարդի 22-ին




## ԿԱՎԻ ՄԱՍԻՆ

Գետնի մեջ շատ տեսակի կավեր կան. կավը վոք  
չորանում ե, ամրանում ե,  
մուրճով խփես, կփշրվի։

Հապա փորձիր վոան ջուր  
լցրու, կավը կփափկի, կծան-  
րանա, ձեռքերի մեջ հեշտ կը-  
տրորվի։ Նրանից կարելի յե  
զանազան իրեր ծեփել։

Աշխատանքը սկսեցեք հեշ-  
տից։ Ինքներդ ել մտածեցեք  
ինչ կարելի լե ծեփել.

Փոգնոց հագեք, կավի  
տակ տախտակ կամ թղթի  
կտոր զրեք, թաց կավի մեջ  
յեթե հարկավոր լինի անցքեր  
բաց անել, ոգտվեցեք այսպի-  
սի փայտիկներից։



Ավելորդ կավը հեռացրեք այսպիսի  
փոքրիկ թիակով։

Զեր շինած իրելը լավ չորանալուց  
հետո ներկեցեք սոսնձի ներկերով։

## ԻՆՉ ԵՆ ԱՆՈՒՄ ԿԱՎԸ

Կա լավ տեսակի բրուտի կավ, նրանից ամանեղեն են պատրաստում, պատրաստում են կտուրների համար կղմինտր, խաղալիքներ։ Շինում են մեծ յերկար խողովակներ և անցկացնում գետնի տակ ջրի, կամ կեղտոտություններ թափելու համար։

Կա աղյուսի կավ։ Նրա հետ ավագ են խառնում և աղյուսներ շինում։ Մեր յերկրում հիմա աղյուս շատ ե պետք։ Աղյուսից շատ շենքեր են կառուցում։

Կան նաև գունավոր կավեր։ Այդպիսի կավերից ներկեր են պատրաստում՝ գեղին, կարմիր, յերկնագույն։

1. Իմացեք ինչպիսի կավ կա ձեր ապրած վայրերում։

2. Մեր գիլ կավից ինչ են պատրաստում։

3. Մեզ մոտ շենքերի համար ինչ քար են բանեցնում։

4. Վնրտեղից ե տուֆը։



## ԻՆՉԻ ՅԵ ՊԵՏՔ ԱՎԱԶԸ



Ավազը շատ անհրաժեշտ շինանութիւն։ Առանց նրան աղյուսը կփշվի։ Առանց ավազի չի պատրաստվի բետոն, վարից այսպիսի հարթ մոխրագույն տներ են շինում։ Առանց նրան փողոցը չի կարելի ծածկել ասֆալտով։ Առա վորքան անհրաժեշտ ե ավազը։

Կա և այնպիսի սպիտակ գույնի ավազ, վորից ապակի յեն պատրաստում։ Այդ ավազի հետ խառնում են կիրուսոդա և շատ ուժեղ կրակի վրա հալում են, դարձնում հեղուկ ապակի։ Նրան տալիս են ինչ ձև ցանկանում են և թողնում են ամբողջական։



Իմացեք ձեզ մոտ վնրտեղից են ավազ ստանում։ Ինչ են անում այդ ավազը։


## ԻՆՔՆԵՐԴԻ ՇԻՆԵՑԵՔ ԱՂՅՈՒՄՆԵՐԻ ՏՈՒՆ

Ցերեք մաս կավին վերցրեք մի մաս ավագ, Վրան  
ջուր լցրեք և խառնեցեք այնքան, վոր սաացվի թանձր,  
աղյուսի խմոր:

Լուցկու տուփի հատակը պոկեցեք՝ կղառնա կաղա-  
պար: Կաղապարը պետք է թիշ թրջել կամ ավազոտել  
վոր կավը նրանից չկպի:

Պատրաստի աղյուսները, չորանալուց հետո, պետք

ե կրակի մեջ թրծել, վոր  
պինդ լինեն:





Պատ դրեք այսպես: Աղ լուսների արանքը կափ քսե-  
ցեք, լավ նայեցեք, տեսեք, անկյունը ինչպես է դր-  
ված:

Կտուրը շինեցեք Փաներից:

Նախ մեխեցեք այսպիսի 3  
ձողերից:

Հետո տան գլխին  
դրեք:

Մտածեցեք, ինչպես  
կարելի է ավելի հեշտ  
և ամուր շինել տունը:



## ՄԵՐ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԸ ՎԵՐԱԴԱՐՁԵԼ ԵՆ

Ցերեխաներն ուրախ ձեն են տալիս: Տու-  
աշներն յեկել են, յեկել են... Արհեստանո-  
ցում յեռում ե աշխատանքը:  
Շուտով կգան սարյակները:  
Պետք է ստուգել լավ են շին-  
ված նրանց բները, պետք է  
տանել ծառերին ամրացնել:

Շուտով կգան և կռունկ-  
ները, վայրի բաղերը, սագերը,  
նրանցից հետո ծիծեռնակը,  
սոխակը և ուրիշ շատ չվող  
թռչուններ:

Անտառներում, դաշտե-  
րում և այգիներում կսկսեն  
իրենց յերդը: Բներ կհյուսեն,  
ձագեր կունան: Բարով յեկաք  
մեր թևավոր բարեկամներ,  
յեկեք վոչնչացրեք մեր բերքի վնասատու մի-  
ջատներին ու խխունջներին:

«ԹՌՉՈՒՆՆԵՐԻ ՈՐԸ»



Յերեխաները թոշունների դիմակներ հագել, յերթի մեջ դուրս յեկել: Տանում են պլակատներ: Թող բոլորը կարդան և իմանան, վոր թոշունները մը բարեկամներն են: Ահա և չալ կատուն: Նրան մոռ չեն թողնում: Նա թոշունների թշնամոն են:

ՄԻԶԱՏՆԵՐԸ ՓԶԱՑՆՈՒՄ ԵՆ ԱՅԳՈՒ ՅԵՎ ԱՆՏԱՌԻ ԾՍՈՒԵՐԸ.  
ՓԶԱՑՆՈՒՄ ԵՆ ԴԱՇՏԻ ՀԱՑԸ, ԲԱՆՋԱՐԱՆՈՑԻ ԲՈՒՅՍՈՒԵՐԸ,  
ԹՈՉՈՒՆՆԵՐԸ ՎՈՉՆՉԱՑՆՈՒՄ ԵՆ ՄԻԶԱՏՆԵՐԻՆ, ՆՐԱՆՔ  
ՄԵՐ ՈԳՆԱԿԱՆՆԵՐՆ ՈՒ ԲԱՐԵԿԱՄՆԵՐՆ ԵՆ.

1. Աշնանը բոլոր թոշուններն են չփում:
2. Չմեռող թոշուններն ի՞նչպես են կերակրվում:

Առաջադրություն: — Նշանակեցեք 1) ծանոթ թոշունների յերևալը: 2) Վերտեղ են կեռ վարոնում: 3) Նոր տներ են շինուն, թէ հներն են կարկատում: 4) Նրանց գույնն ու վարքը չի տարբերվում աշնանից: Արուիք և եղի գույնները միատեսակ չեն:

ՎՈՐՏՏԵՂԻՑ ԵՆ ԳԱԼԻՍ ԿՌՈՒՆԿՆԵՐԸ

1.

Վաղ առավոտ եր: Վերևից լսվում եր թեթև խշոց: Այդ նրանց թեների ձայնն եր:  
կոռւնկները, կոռւնկները...

Նայեցեք, առջևից թոշում ե առաջնորդը:  
— Կըռռ... — բարկացած բղավեց առաջնորդը:

— Կո՛ռ... — պատասխանեցին մյուսները.

Բարձրում թեները խշացին մեկ, յերկու, յերեք...

Յերկնքում մնացին հազիվ նկատելի լիետեր:  
Ուաֆիկը յերկար

նայեց նրանց յետևից:  
Հետո հարցրեց. — Վորտեղնեն լինում կոռւնկները ձմռանը: Իսկ հեղուշն ասաց.




— Յերանի գոնեմի անդամ տեսնեյի այն յերկիրը, վորտեղից գալիս են կոռւնկները:

2.

Ճարպիկ ե Միխայլ:  
Ուժեղ ե Միխայլ:

Նա չի վախենում իր յերկրի, Աֆրիկայի  
տաք արևից:

Բայց Միսայը հազիվ ե կանգնում վոտքերի  
վրա.—Ի՞նչու...



Առավոտից մինչ իրի-  
կուն աշխատում ե նա  
գետի ափին: Անիվը պտը-  
տում, դույլով ջուր քա-  
շում ե վերև լցնում ջրի  
ավագանը:

Որ որի, ամեն որ  
լցնում ե ջուրը, լըց-  
նում, բայց անիծված ա-  
վագանը չի լցվում: Չի  
լցվում, քանի վոր նրա  
յցրածը վերև ե քաշում

Հուդա-Հուդան լցնում իրեն ավագանը: Իսկ  
նրանից վերցնում ե Այիմը, Այիմից Բոբոն:

Ամենից վերև աշխատում ե Թիք-թիքը: Նա  
ավաղան չունի, նա բոլոր ջուրը բաց ե թող-  
նում տիրոջ դաշտերը:

Չոր հողը ագահորեն ծծում ե ջուրը, հա ծծում...

Մեծ են տիրոջ դաշտերու: Այնտեղ տարին  
յերեք անգամ ցանքս են անում: Յեզ առավո-  
տից մինչև յերեկո Միսայն ու ընկերները պտը-  
տում են անիվները:

Իսկ սպիտակ տիրոջ համար ջուրը դեռ քիչ  
է, քիչ ե...

3.

Մութ գիշեր ե:

Նեղոս ղետի ափերին որորվում են բարձր  
յեղեգները Ահա ջրի յերեսով սահում ե մա-  
կույլը: Նրա մեջ են Հուդու-Հուդուն, Միսայը  
Սենգոն, Այիմը, Բոբոն, Նրանք փախչում են  
սպիտակ աղայի ձեռքից: Նրանք կգնան, կպահ-  
վեն իրենց անտառներում:

Սպիտակ տերը նրանց չի գտնի:

Ահա մակույլը մոտեցավ ափին:

Արեր ծագեց: Յեղեգների մեջ նրանց չեն  
տեսնում:

— Հա. —ուրախ ձայն տվեց Հուդու-Հուդուն  
և մակույլից թռավ — ջրի մեջ:

— Հա... ուզում եյին ասել և մյուսները,  
բայց չասացին:

Հանկարծ ինչ վոր-մեկը բարձր բղավեց.

— Կո՛ռ...

Կոռ, կո՛ռ... լսվեցին չորս կողմից: Մեծ  
թռչունը բարձրացավ ուղիղ Հուդու-Հուդույի  
գլխի վրայով: Նրա յետեկո թևերը թափահարե-  
լով բարձրացան մյուսները:

Ղուղու-Ղուղուն ափի դուրս յեկավ և արագ,  
արագ վազեց։ Նրա հետեւից վազեցին Միխայը,  
Սենգոն, Բոբոն, Ախմը...

4

Յերեխաները յերկար նայեցին կռունկների  
լետեւից և վազեցին դպրոց։

Նրանք լավ նկատեցին մեծ, մոխրագույն  
կռունկին յերամի տուաջնորդին։

Գիտեք, յերեխաներ, այդ վիր կռունկն ե։  
Դա հենց այն ե, վորը բարձրացավ Ղուղու-Ղու-  
ղույի գլխի վրայով։



### ԵՍ ՈՒԽՄ ԳԼՈՒԽՆԵՐՆ ԵՆ



Ճանաչիր այս թռչուններին անունները գրիր։

### ԵՍ ՈՒԽՄ ՎՈՏՔԵՐՆ ԵՆ




Կեռերով հւմ վոտքերն են  
Ումն են թաղանթով։  
Իսկ վիր թռչունի վատներն են սուր-սուր ճան-  
կերով։

### ԵՍ ՈՒԽՄ ՊՈՉԵՐՆ ԵՆ




Պատմիր, վոր թռչունի պոչը ինչ տեսակ ե։  
Աքաղաղի պոչը նման ե անիվի։  
Իսկ ծիծեռնակինը.



Հավանում եք: Մենք  
ենք շինել արհեստա-  
նոցում: Խեղճ հավերը  
մաքուր ջրի կարոտ  
եյին: Իսկ հիմա յերբ  
ծարավում են՝ վա-  
զում են գեղի ջրա-  
մանը:

Ես ել կտամանը



Կտամանն ել ենք մենք շինել:  
Ի՞նչ տալիս ենք, բոլորը հավերն ուտում են,  
կերը հողին չի խառնվում:  
Հավաքեցեք թոշուների աղբը՝ լավ պարար-  
տան յութ եւ:

Այսոր Ոողիկը նկատեց, վոր Ծաղիկը մեջքը քսում  
ե շափարին, հա քսում:

— Ի՞նչ ե պատահել մեր կովին. — հարցրեց նա  
հորը:

Գարունը յեկել ե, կովը մազը փոխում ե. - պա-  
տասխանեց հայրը, հրն բուրդը թափվում ե, տեղը  
նորն ե դուրս գալիս. Դրանից կաշին բոր ե գալիս,  
քսում ե պատերին:

Հետո յեկավ Սուրիկը, ձեռքին մի լավ բրդե  
գնդակ:

— Եկ վորտեղից. — հարցրեց Ոողիկը:

— Կովերի մազից ե. մեր Ձեյրանի, Եղիկենց Սոնի,  
Նինեւենց Նարզիզի .. Զեռքդ վոր տրորես կովի մեջ-  
քին, բուրդը կ'կլուզի, կ'կլուզի, - գնդակ կղառնա: Հետո  
պետք ե մի քիչ թշշեր:

Արի, գնանք ցույց տամ:

Սուրիկի հայրիկն տասց.

— Գիտեք իսչ, յերեխաներ դուք կովերի բուրդը  
զուր միք փչացնի, հավաքեցեք տարեք կոռպերատիվ:

Դրանից տեսակ-տեսակ բաներ են պատրաստում  
մեր գործարաններում:

1. Ել ի՞նչ կենդանիներ են գարնանը բուրդը փոխում:
2. Զեղ մոտ կոռպերատիվում նման բուրդ ընդունում են.


Ճագարը տալիս ե մեզ համեղ միս, լավ մորթի և աղվամազ:



Փոքր ճուտիկներին կերակրում ե կաթով,  
իսկ ինքը ուտում ե խոտ պտուղներ և այլն:

ԱՄԵՆ ՄԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ, ԴՊՐՈՑԻ, ՄԱՆԿԱՏԱՆ ԿԻՑ  
ԿԱԶՄԱԿԵՐՊԵՆՔ ՃԱԳԱՐՄՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

ԿԱԶՄԱԿԵՐՊԵՆՔ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՌՆԵՐԻ  
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ



Խոզը շատ միս ե տալիս.

- Խնամենք փոքրիկ գոճիներին:
- Խնամենք ճագարներին, հորթերին:

Ճագարի բնակարանը կարելի յե պատրաստել շատ հասարակ, բայց պետք ե լինի լուսավոր և չափացանց մաքուր:

Խոտը կանաչեց: Վոշխարներին դաշտ հանեցին:


Վոշխարները ծնեցին պստլիկ գառնուկներ: Հենց ծնված որից գառնուկները իրենց փոքրիկ տոտիկներով վազվրդում են մոր յետեղ: Յերբ գառնուկը ուտել ե ուզում, զոփում ե զլխով մոր փորին, չոքում առջեկ վոտքերի վրա ու կպչում կուրծին: Իսկ մայր վոշխարը հոտոտում ե նրան, միզում ե, չ թողնում իրենից հեռու գնա:

Կուշտ ուտում են գառնուկներն ու սկսում իրար հետ խաղալ: Վազում են, իբր իրար հարու յեն տալիս, այն ինչ դեռ յեղջուրներ ել չունեն:




Առաջ. — Գառն գարնանը, ձունը ձմրանը:

Մայր գայլը, ամբողջ ձմեռը թափառեց: Իսկ վաղ գարնանը անտառի կիրճում մի խուլ տեղ գտավ, քարի տակ ըռւն շինեց և ունեցավ հինգ հատ փոքրիկ, կույր ճուտեր:



Տասներկու որից հետո գայլի ճուտերն սկըսեցին տեսնել: Նրանք փոքրիկ, շնիկների նման, թռչկոտում ու խազում եյին, և մի ամբողջ ամիս ծծում եյին մոր կաթը: Հետո քիչ-քիչ սովորեցին միս ուտել:

Շարունակ խաղալով նրանք տրորել են բնի մոտի խոտը և չորս կողմը ցրիկ տվել սպիտակ, կրծած վոսկորներ:



սկզբից բաց եյին:

Նրանց աշխարհ գալուց մի քանի ժամ հետո  
մայր նապաստակը քաղցեց. թողեց նրանց ձյան  
մեջ ու ինքը վազեց անտառ կեր ճարելու:

Յերբ նա վերադարձավ, ճուտիկները չկային:  
Սպասելուց ձանձրացել ու փախել եյին: Վախե-  
ցած մայրը սկսեց իր յերկար ականջներով ծափ  
ապա: Նրանք այդպես են կանչում իրենց ճու-  
տերին: Յեվ մոր կանչին վերադարձան վեց  
ճուտիկից միայն յերեքը:

Մնացածները կամ կորել են, կամ սառել,  
կամ, գուցե, աղվեսի փայ են դառեր:

Մայր արջն ելի նոր քոթոթներ ունեցավ: Փոքրիկ  
կույր, փիսիկների նման:

Յերբ փոքրիկ քոթոթները մի քիչ մեծացան, մայրն  
սկսեց նրանց ել վորսի տանել մեծ քոթոթների հետ:  
Մեծերը մոր մոտ են վառմ մինչև յերեք տարի:

Ահա լույսն սկսեց բացվել, մայր արջը բոլորին տա-  
րավ անտառ: Նրանք գնում ելին առանց շտապելու:  
Մայրը փոքրիկներին սովորեցնում եր կեր ճարեր: Քարը  
շուռ տվեց, թաթով ճպմեց բգեղին ու կերավ: Բանեց  
մի թիթեռ, տվեց քոթոթներին: Ի՞նչ ուրախություն  
եր... թիթեռի թևերը խտվագնում են նրանց քթերը,  
նրանք ել վիշտացնում են. թռչկոտում, խաղում, մինչեւ  
վոր կուտեն: Ահա գտան գետնամորի: շատ համեղ հա-  
տապտուղ ե: Այստեղ ել պատահեց մրջունների մի  
կույտ: Արջն սկսեց բանդել կույտը և մրջունների ձր-  
վերը խփշտել:

Սա ել ճահիճ և ճանապարհի վրա: Խսկ ճահճի  
մյուս կողմում փոքրիկ յեղենիներ: Մայր արջը ճահճի  
վրայով անցավ և սկսեց անուշ անել յեղենիների քնքույշ  
ճյուղերը:

Քոթոթները մնացին: Թոչնի բուն գտան ու բոլոր  
ձվերը կերան: Յերբ տեսան, վոր մայրը հեռացել ե.  
վազեցին նրա յետեկից, բայց ճահճից վախեցան: Մայր  
արջը մոնչաց: Մեծ քոթոթը լողաւով անցավ ճահճն ու  
մոտեցավ մորը: Մայրը թաթով—շրթի, մի ապտակ  
հասցրեց նրան: Քոթոթը հասկացավ, յետ դարձավ ու  
սկսեց անց կացնել փոքրիկներին: Մայրը լուռ հետեւմ  
եր նրան:

## ԱՊՐԻԼԻՆ ԴԻԾԵՑԵՔ

1. Մեղուներին դուրս հանելը.
2. Ծառերի ծաղկելը.
3. Թիթեռների յերևալը:
4. Անասուններին արոտ տանելը:
5. Դաշտը վարելը:

Ձեր զիտածը նկարեցեք և պար առեք:



Քոթոթը հաջող անցկացրեց փոքր յեղբորը, բայց  
ըրոջը բերեց, բերեց ու ճաճի կես տեղում հանկարծ  
վայր գցեց. մայրը վագեց,  
վերցրեց փոքրիկիս, իսկ խեղճ  
մեծին ելի մի հատ հասցրեց:  
Խեղճ քոթոթ, դժվար է  
քո գործը, իսկ ինչ կանես-  
յերբ մայրդ բոլորովին վոնդի  
իր մատից:

Պետք է ապրես քո խելքով ու աշխատանքով:

| Ծառի<br>անունը | Տերեւները<br>լերևացին | Ծաղիկները<br>լերևացին | Ծաղիկների և<br>տերեւների նկար-<br>ները |
|----------------|-----------------------|-----------------------|--|
|                |                       |                       |  |

## ՄԵՐ ԿԵՆԴԱՆԻ ԱՆԿՅՈՒՆՈՒՄ



Շշերի մեջ ջուր ևնք  
լցրել և զանազան ծառերի  
ճյուղեր դրել ջրի մեջ։  
Դրսում դեռ ցուրտ եր,  
դրսի ծառերը դեռ մերկ  
են. իսկ մեր անկյունում  
արդեն բացվել են ուռենու,  
լորենու, հազարածաղկի  
տերևները. իսկ կեռանե-  
նու ճյուղի զըա բացվել  
են և ծաղկի թերթիկ-  
ները.

ԴԻԾՈՒՄԿԻՐՈՒՄ ԵՆՔ  
(Վնր ծառի) ճյուղ...

Դրինը ջրի մեջ (ամիս, թիվ)  
Յերևացին տերևները . . . . .  
Յերևացին ծաղիկները . . . . .

## ԾԱՌԻ ԱՐԹՆԱՆԱԼԸ

Գարնանը նայում ես կեչի ծառին, — դեռ  
կանաչ չկա, բայց բոլոր ճյուղերի վրա լցվել,  
մեծացել են բողբոջները — ապագա տերևներն  
ու ծաղիկները:

Գարունը յեկել ե, յեղանակը տաքացեր:  
Ծառի արմատից հյութը բարձրանում է վերի,  
վերև մինչև ամենաբարձր ճյուղերը: Բողբոջնե-  
րըն ազահորեն ծծում են այդ քաղցր հյութը և  
ուռչում, մեծանում: Տերևները մեծանում են  
սեղմում բողբոջին: Պայմում ե բողբոջը և նրա  
միջից յերևում ե մի փոքրիկ տերևների փնջիկ:  
Աճում են տերևները վոչ թե որերով, այլ ժա-  
մերով: Մի յերկու շաբաթ չանցած ամբողջ կե-  
շին ծածկվում ե թարմ կանաչով.



Տեփորուկի  
ճյուղ


Կեչի ծառի  
ճյուղ

Կաղամախու  
ճյուղ


## Գ Ա Ր Ո Ւ Ե Ն

Ամեն տեղ սկսվել է աշխատանքը, դաշտում  
բանջարանոցում, այգում: Մենք գնացինք եքս-  
կուրսիա դեպի կոլխոզ, տեսանք այնտեղի աշ-  
խատանքները:

Ծանոթացանք մեքենաների հետ:



Տարունակեցեք բնու-  
թյան դիտելը:






Տարբացան  
ԲԱՆՁԱՐԱՆՈՅՈՒՄ

### ԾԼԵՋՐԵԼ ԵՆՔ ԱԵՐ ՄԵՐ

Ցոր առաջ մենք սիսեռի, լորու  
և ամսաբողկի սերմերը ափսեյի մեջ թրջեցինք,  
վերից թաց շորով ծածկեցինք ու մի տաք տե-  
ղում պահեցինք: Սկզբում մենք նկարեցինք չոր  
սերմերը: Ցորից հետո եր ցանելուց առաջ  
նկարեցինք ծլած սերմերը: Ցանեցինք միայն  
ծլած սերմերը:

## ՄԵՐ ՓՈՐՁԵԲԸ

Մեր կենդանի անկյուննում մենք փորձեր ենք կատարում. ճարել, բերել ենք տուփեր, ցանել ենք տարբեր սերմեր




Մի ցանածը ամանով մութ պահարանն ենք դրել:

Մեկին ողից ենք՝ զրկել, վրեն բաժակ ենք կործել:



Յերրորդ տուփը թողել ենք առանց ջրի, անիմամ:

Փորձ բանջարանոցում.



Հենք քաղանել քաղանել ենք ֆուք վարունգ սիրում եք


Իհարկե սիրում եք: Աւեմն պետք ե աշխատեք, վար շուտ համի վարունգու:

Հավաքեցեք ձի՛ կճեպներ, որանց մեջ ոդ լրեք և ամեն մեկի մեջ մի սերմ տնկեցեք. Սերմը կծլի, ցողունը կբարձրանա, տերմներ կտա:

Յերբ լեղանակը տաքանա, կճեպները բույսով տեղափուեցեք մարգերի մեջ: Արմաները կանցնեն կճեպի միջով, կամրանա հողի մեջ, վարունգը շուտ կհասնի:

## ՑԱՆԵՑԻՆՔ ՍԻՍԵՌ

Նախ մարգերը պատրաստեցինք. ամեն մեկի լայնությունը՝ 75 սանտիմետր: Այդպիսի մարգերի վրա հարմար ե աշխատել: Մարգի ծայրերում սեպեր տնկեցինք իրարից 15 սանտիմետր հեռու. Սեպերի միջև պարան ձգեցինք և նրա ուղղությամբ փոսիկներ արինք 5 սանտիմետր խռությամբ: Փոսիկները իրարից հեռու են 20 սանտիմետրով: Մյուս յերեխաները փոսիկների միջև զցում են մի-մի սիսու և հողով ծածկուա: Հետո ամբողջ մարգը ջրեցինք: Մարգի ծայրում մի տախտակ ամրացրինք վրեն գրած: «Սիսուը ցանեցինք մայիսի 15-ին»:



## ՑԱՆԵՑԵՔ ԱՄՍԱԲՈՂԿ

Ամսաբողկի համար մենք մարգի լայնությամբ ակոսներ շինեցինք:

Ակոսների միջի տարածությունը՝ 12 սանտիմետր, իսկ խորությունը՝ 3 սանտիմետր:



Մեզ ասել եյին,  
վոր կարելի յե ցանել  
և չոր սերմեր, բայց  
մենք ցանեցինք ծլած  
սերմեր:

Ամեն որ ջրում եյինք, յերբ գուրս յեկավ

ամսաբողկը, մենք նրան նոսրացրինք, թողնելով արանքներում 7 սանտիմետր: Ծլերի շուրջը հողը քիչ փափկացնում եյինք. բոլոր ժամանակ մենք հետեւում եյինք բույսի աճելուն, նկարում և չորացնում եյինք զանազան փոփոխությունները: Չորացրած ծիլերից հավաքածու կազմեցինք:


## ՍՈՒ ԾԼԵՑՐԵՔ

Զոկեցեք փոքր և միջակ սոխի գլուխներ: Վերևի մասերը կտրեցեք և տնկեցեք մարգերի վրա: Նրանց միջև թողեք 15 սանտիմետր տատարածություն: Սոխի կեսը ծածկեցեք հողով: Տնկելուց հետո պետք ե լավ ջրել:



## ԿԱՐՏՈՓԻԼ ՑԱՆԵՑԵՔ

Ցանելուց մի ամիս առաջ լավ ե կարտոֆիլը ծլեցնել: Փոեցեք մի տաք, լույս տեղ մի շարքով: Ցանում են կարտոֆիլը շարքերով առանց մարգի: Նարքերի միջի տարածությունը՝ 50 սանտիմետր: Մի կարտոֆիլը մյուսից 35 սանտիմետր հեռու: Բահով պետք ե փորել փոսեր 10 սանտիմետր խորությամբ: Այդ փոսիկների մեջ պետք ե դնել կարտոֆիլ և ծածկել հողի ու մոխրի խառնուրդով:



Յերբ ծիլերը բարձրանան մինչև 15 սանտիմետր, պետք է կարտոֆիլի բուկը տալ: Ծիլերը մի կողմ պետք է տանել և ցողունները ծածկել հողով: Տերևները չպետք է ծածկել:

Առաջին անգամ բուկը տալուց 20 որ հետո պետք է յերկրորդ անգամ բուկը տալ:

### ՄՈԼԱԽՈՏԵՐ

Յերբ մեր ցանած բույսերը քիչ մեծացան մենք դուրս յեկանք քաղհանի:

Սկզբում շատ դժվարանում ենինք:

Չեյինք հասկանում, վորոնք են ոգտակար բույսերը և վորոնք մոլախոտերը:

Ուսուցիչը բացազրեց: Յերբ քաղհանը վերջացրինք, մենք վերցրինք մի քանի ծիլեր մեր ցանածներից և մի քանի մոլախոտեր չորացնելու համար:



Ուսումնասիրիք մոլախոտերը  
Մոլախոտերը-բանջարանոցի թշնամիներն են:

Ուսումնասիրեցեք մոլախոտերը



Տիտեցեք

այս

մոլախոտերը



մոլախոտերը

Տերեփուկ



Խոտոտիկ



Հովկի պարկ




Թազի կամ  
Հոռոմապանոք

ԻՄԱՑԻՐ ՅԵՎ ԳՐԵՐ  
ՄՈԼԱԽՈՏԻ ԱՆՈՒՆԸ ՎՈՐՏԵԼ Ե ԲՈՒԽՆՈՒՄ

## ԿՆՃԹԱՎՈՐ ԲԶԵԶՆԵՐԼ

Կոլխոզի այգեպանը հետևում եր կնճթավոր  
բզեզներին: Նա նկատեց, վոր բզեզները բարձ-  
րանում են ծառի վրայով և հասնում ծաղիկ-  
ներին:

Լավ,—մտածեց՝ այգեպանը,—հիմա յես ձեր  
հախից կզամ: Յեթե դուք թոշելու ծույլ եք,  
յես գիտեմ ձեզանից ինչպես կազատվեմ:



Նա թղթից գոտի պատ-  
րաստեց, ծառի բնին կապեց  
և վրան խիժ քսեց: Բզեզները  
բարձրանում և կպչում եյին  
թղթին:

Այդ կոլխոզի ծառերն այն-  
քան խնձոր բռնեցին...

Վոչ մի կոկոն չփչացավ:

Ուսումնասիրեցեք վնասատուներին

Փնտրեցեք

Խնձորենու վրա

Ամստբողկի և

բողկի վրա



Կազամը թիթեսի  
թրթուաը

Կնճթավոր  
բզեզ

բանջարանցի  
լվեկներ

ՄԵՆՔ ՊԵՏՔ Ե ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵՆՔ ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐԻՆ, ՎՈՐ  
ԱՎ ԿՈՎԵՆՔ ՆՐԱՆՑ ԴԵՄ,  
ՎՈՐ ԲԱՐՁՐԱՑՆԵՆՔ ԿՈԼԽՈԶԻ ԲԵՐՔԸ

## ԲԱՆՉԱՐԱՆՈՑԻ, ԱՅԳՈՒ ՅԵՎ ԴԱՇՏԻ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԼ

ԽԼՈՒՄԴԻ ԴԱՏԸ

Բնագետների խմբակը խլուրդի գատ կազ-  
մակերպեց:

Մեղաղրողն ասում եր.

— Խլուրդը վնասակար ե:

Նա փչացնում ե աշնանացանը:

Փորփրում ե դաշտի հողը, վորից հետո խոտը  
հնձելիս, գերանդին փչանում ե:

Մեղաղրողից հետո խոսեց պաշտպանը:

Նա ասաց.

— Ճիշտ ե խլուրդը  
մեզ մի փոքր վնաս ե  
տալիս, բայց նրա տը-  
ված ոգութը շատ ե:  
Նա շատ թրթուռներ  
ե ուտում, վորոնք  
արմատներ են փչացը-  
նում: Նա պահպանում

ե արտն, այգին ու դաշտը: Խլուրդին արդա-  
րացրին, քանի վոր նրա տված ոգութը մեծ ե,  
իսկ վնասը՝ քիչ:



## Վ Ո Չ Ն Ի

Մութն ընկնում եր: Թոշունները քնեցին:  
Անտառում լուռ եւ ու մռայլ:

Վողնին դուրս յեկավ իր բնից, չորս կողմը  
նայեց, հոտոտեց ողը, ականջները սրեց: Շուրջը  
հանգիստ եր: Նա սկսեց ման դալ անտառում.

յերբեմն դանդաղ ու զգուշ,  
յերբեմն վազելով:

Բոնեց մի քանի բզեզ,  
մորեխ, կերավ անզգույշ  
մկնիկին: Ամառվա գիշերը  
կարճ եւ Լույսն սկսեց  
բացվել:

Վողնին յեկավ հին

կաղնու մոտ քնելու:



## ՀԱՆԵԼՈՒԿ

Մեծ ծառ եմ հաստարմատ,  
վերջին յերկու տառս տեղափոխեցնք,  
կղառնամ պտուզ:

## ԴԱՐՆԱՆՔ ԳՈՐՏԵՐԻ ԲԱՐԵԿԱՄԸ

— Ճիշտ ե, վոր գորտը վնասակար ե:  
— Վո՞չ:

Գորտը ճանձեր ե  
ուտում, գորտը վորդեր  
ե ուտում: Գորտը իշ-  
խունջներ ել ե ուտում:


Գորտը վոչնչաց-  
նուժ ե այգու և բան-  
ջարանոցի վնասատու-  
ներին:

Մի սպաներ գոր-  
տերին:



## ՃԱՆԱՋԵՑԵՔ ՄԻՋԱՏՆԵՐԻՆ

Հետևեցեր նրանց շարժ ու ձևերին: Վորսա-  
ցեք, վոր տանը լավ հետևեք. ինչ են ուտում,  
ինչպես են շնչում, ինչպես են մեծանում:



Զնջված ցանցերը բնչով են անհարմար:  
Թէ չեք հառկանում, փորձեցեք.

## Յերբ և լինում

Արեն ե այրում,  
խոտը չորանում,  
ցորենը հասնում,  
հասկերը լցնում.  
Այս յերբ ե լինում.

Ամռան ամիսներն են

1. Հունիս — 30 օր
2. Հուլիս — 31 օր
3. Ոգոստոս — 31 օր

Շարունակեցեք բնության դիտողությունները:

Նշեցեք փոփոխությունները յեղանակացույցում:

Դիտեցեք արևի դիրքը յերկնակամարում:

Պատրաստեցեք արևի ժամացույց:



## ԵՔՍԿՈՒՐՍԻԱ. ԴԵՊԻ ԼՃԱԿԲ

Այսոր մենք դպրոցից գնացինք եքսկուրսիա գեղի մոտիկ լճակը։ Հետներս վերցրինք ապակե պնակներ ու ցանցեր։

Ճանապարհին յերգում եյինք։

Լճակի մոտից լսվում եր գորտերի բարձր կռկոցը։ Մենք կամացուկ մոտեցանք լճակին ու սկսեցինք դիտել կյանքը Ջրի մեջ։

Ջրի վրայով արագ սահում եր յերկար վոտքերով մի միջատ—Ջրամլակ։

Ի՞նչ լավ սղղացող ե, — նկատեց Թամարը։

— Ի՞նչպես ե, վոր չի սուզվում. — հարցրեց Արամը։

Ուսուցիչը բացազրեց.

— Ջրամլակի վոտքերը ճարպոտած են, դրա համար ել չի սուզվում Ջրի մեջ։ Յերբ տուն գնաք, վերցրեք ասեղը, վրան յուղ քսեք և զցեք Ջրի մեջ, տեսեք կսուզվի։


Ջրի մեջ մենք տեսանք ճպուռի թրթուռներ, Ջրի խխունջներ, գորտի շերեփուկներ։

Այդ բոլորից մենք վորսացինք, դրինք պընակների մեջ։ Վերցրինք նույնպես Ջրային բույսեր, ջրոսպ, մամուռ։



Դպրոցում, մեր վերցրած ջրային կենդանիներին տեղափորեցինք առանձին պնակներում, թղթերի վրա գրեցինք անունները և փակցրինք պնակներին:

## ՀԵԺԵՑԵՑԵՔ ՃՊՈՒԹԻՒԹԻՒԹԻՒՆ



Ավազի մեջ ամրացրեք մի փայտի ձողիկ, այսպես վոր ծայրը ջրից դուրս մնա: Պնակը վերևից թանզիֆով կամ ապակով ծածկեցեք: Կերակրեցեք թրթուուին որ ու մեջ կտրատած անձրևորդի կտորներով: Հետևեցեք ինչպես ե թրթուոը շարժվում, ուտում, ինչպիսի բերան և դիմակ ունի:

Վերցրեք մի ապակե պնակ: Մեջը քիչ լվացած ավազ լցրեք: Դրեք այստեղ ճպուոփ թրթուուին և վերևից ջուր լցրեք: Զրի մեջ իջեցրեք յերկու ջրային բույսի ճյուղերը:


ՇԱՀԻԿՆԵՐ  
ԱՆՏԱՌ, ԴԱՇՏ,

ՅԵՎ

ՄԱՐԳԱԳԵՑԻՆ

Յերեկ ել մենք գնացինք հաճարի արտը: Հաճարի մեջ տեսանք տերեփուկներ—գեղեցիկ, կապույտ ծաղիկներ: Նրանց ցողունը չոր ու բարակ է: Տերեները քիչ: Պատահում եր և գյոզալ ծաղիկը, վարդագույն կամ ավելի մուգ գույնի: Մենք կարծում ենինք, թե դա մեխակ է, իսկ Սուրբիկն ասաց, վոր գյոզալ ե—վասատու մոլախոտ: Սուրբիկը լավ սովորող է, նա շատ բան գիտե:

Մենք չնկատեցինք, թե ինչպես հասանք անտառին: Դաշտից հետո, անտառը մութն ե և զով: Լսվում է, ինչպես փայտփորը խփում է ծառին, և յերաշտահավը շվշվացնում:



— Ահա թթվառվույտ, — ձայն տվեց Անիկը,  
սրա տերևներն այնպես թթու յեն:



Ավելի լուսացավ: Անտառը  
վերջացավ, սենք դուրս յեկանք  
մարգագետին: Ինչքան տեսակ-  
տեսակ ծաղիկներ կան. կա-  
պույտ, դեղին, կարմիր: Իսկ խոտը կանաչ,  
հյութալի: Գտանք սպիտակ, վայրի  
առվույտ: Այնքան հոտավետ եւ

Արևի տակ փայլեց գետը:

— Լողանանք, լողանանք, —  
բղավեցին բոլորը և վազեցին դե-  
պի գետը:



Թթվառվույտի տերևները կա-  
նաչ են, նման առվույտի տե-  
րևներին, իսկ ծաղիկները սպի-  
տակ, վարդագույն զանգակի  
նման:

Ավելի լուսացավ: Անտառը  
վերջացավ, սենք դուրս յեկանք  
մարգագետին: Ինչքան տեսակ-  
տեսակ ծաղիկներ կան. կա-  
պույտ, դեղին, կարմիր: Իսկ խոտը կանաչ,  
հյութալի: Գտանք սպիտակ, վայրի  
առվույտ: Այնքան հոտավետ եւ

Արևի տակ փայլեց գետը:

— Լողանանք, լողանանք, —  
բղավեցին բոլորը և վազեցին դե-  
պի գետը:

## Արեվի յեվ ջրի մասին

### ԻՆՉՊԵՍ ՀՈՂԱՆԱԼ

Ահա այսպես պետք եւ լողանալ վոր ոգուտ  
ստացվի:

Լողացեք ամեն որ, բայց մի անգամից վոչ  
ավելի:

Ամեն անգամ 10 բոպեյից ավելի չըլո-  
ղանաք:

Յերբ ջրից դուրս գաք, մի կանգնեք թաց  
մարմնով արևի կամ քամու դիմաց: Անմիջապես  
սրբեցեք և հաղնվեցեք:

Մի լողանաք քաղցած ժամանակ, կամ ան-  
միջապես ուտելուց հետո:

Յերեք մենակ չլողանաք անծանոք տեղում:  
Ամեն մի հոկտեմբերիկ պետք եւ սովորի լողալ: Լողալ  
սովորեցեք պիոներներից:

### ԻՆՉՊԵՍ ՊԱՐԿԵԼ ԱՐԵՎԻ ՏԱԿ

Արևի տակ պառկելը շատ ոգտակար եւ:  
Բայց պետք եւ գիտենալ՝ ինչպես անել այդ:



## ՅԵՐԵ ՀԳԻՒՏԵՆԱՔ՝ ՓԱՍԻ ԿԱՄՈՒ-

ՆԱՐ:

Առաջին որը պետք է պառկել 5 ըովելից վոչ ավելի։ Հետո որական 2 ըովե կարելի յե ավելացներ։ Բայց ձեզ կես ժամից ավելի չի կարելի։

Ամեն 2 ըովեն պետք է գառնալ, մեկ մի կողքի, մեկ մյուսի, մեկ մեջքի, մեկ փորի վրա, վոր կաշին չայրվի։

Գլուխը և աչքերը պետք է ծածկել յերեսարբիչով կամ շապկով։

Զի կարելի պառկել արևի տակ անմիջապես ճաշելուց առաջ կամ հետո։

Ով իրեն վատ է զգում, նրան չի կարելի արևի տակ պառկել։

## ԽՆՉՊԵՍ ՀԱԳՆՎԵԼ ԱՄԱՆԸ

Ամառը պետք է հագնվել թեթև և ազատ։

Յերեխաներ, ամսութեախքան լողանալը և սպորտի տակ պառկելը, գնացելը մասնաւոր ձեզ նայի։



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### 1. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

|                              |    |
|------------------------------|----|
| Դպրոցում                     | 3  |
| Բժշկի պատմածներից            | 3  |
| Բոս և տրախոմա                | 4  |
| Պահպանիր աչքերդ ու ականջներդ | 5  |
| Ինչն ենք հաշվում մենք մերը   | 6  |
| Մեր ղեղերի պահարանը          | 7  |
| Թող այրի                     | 8  |
| Զմեռը                        | 8  |
| Գյուղում                     | 9  |
| Հաղորդեցին                   | 10 |
| Անհա տատիկն ու Արմիկ թոռնիկը | 11 |

### 11 ԱՃՈՒՆ

|  |    |
|--|----|
| Յեղանակացուց                                   | 12 |
| Յերը և զուրս զալիս արելը, յերը են վառում լուսը | 13 |
| Աշուն  | 14 |
| Եքսկուրսիա դեպի անտառ                          | 14 |
| Անտառում                                       | 15 |
| Մէռս որը դպրոցում                              | 16 |
| Թափված տերեները                                | 17 |
| Թոշուններն աշնանը                              | 18 |
| Զմեռող թոշունների համար կեր պատրաստենք         | 19 |
| Թոշունների չուն                                | 20 |
| Ռուր են չվում թոշունները                       | 21 |
| Ալգում   | 22 |
| Անտառում                                       | 23 |
| Զմեռը գալիս ե                                  | 23 |
| Զմեան պաշար                                    | 23 |
| Բոլ և ճիշտ տոռում                              | 24 |

|                       |    |
|-----------------------|----|
| Նապաստակ              | 25 |
| Դաշտային մկներ        | 25 |
| Պահվում են            | 26 |
| Ինչն ե                | 27 |
| Բոլըաղ քամին          | 27 |
| Ալիկն ու կելիկը       | 28 |
| Անա ինչ ե գրել կելիկը | 28 |

Զ Մ Ե Ռ

|                               |    |
|-------------------------------|----|
| Չյուն ե գալիս                 | 29 |
| Խնքներս իմանանք               | 30 |
| Չմեռող թռչունները             | 31 |
| Արփիկի դիտածը                 | 32 |
| Պարտեզը ձմռանը                | 32 |
| Սոնան տաքանում հ              | 33 |
| Կոլխոզի գոմում                | 34 |
| Ծտերի սեղանը                  | 35 |
| Աշխատանքի անկյունում          | 36 |
| Չմեռն անտառում                | 37 |
| Արջը                          | 38 |
| Ո՞վ ում ե բռնել               | 38 |
| Վորս                          | 39 |
| Լենիկն ու մաման               | 39 |
| Հյուսիսափայլ                  | 40 |
| Խորհրդային սառցահատ «Կրասինը» | 41 |
| Եսքիմոսները                   | 43 |
| Չնի լուրիթը                   | 44 |
| Բևեռային արջ                  | 45 |
| Աղվես                         | 46 |
| Տաք լերկների գազանները        | 47 |
| Վառարաններ                    | 48 |
| Տարբեր հագուստներ             | 50 |
| Հագուստի մասին                | 53 |
| Վերարկուն չի տաքացնում        | 54 |

Գ Ա Ր Ո Ւ Ն

|                          |    |
|--------------------------|----|
| Աշխարհի կողմերը          | 56 |
| Գարուն                   | 57 |
| Բնության դիտողություններ | 57 |
| Ում աշխատանքն ե          | 58 |

|   |    |
|---|----|
| Ծղնոակ գորգը                            | 60 |
| Յերբ ե լինում                           | 60 |
| Կավի մասին                              | 61 |
| Ի՞նչ են անում կալը                      | 62 |
| Ի՞նչի յե պետք ավազը                     | 63 |
| Խնքներդ շինհցեք աղյուսե տուն            | 64 |
| Մեր բարեկամները վերադարձել են           | 65 |
| Թռչունների որը                          | 66 |
| Վարտեղից են գալիս կոռւնկները            | 67 |
| Ես մամ գլուխներն են                     | 71 |
| Զբաժան                                  | 72 |
| Մեր ծաղիկը                              | 73 |
| Ճագարը                                  | 74 |
| Վոչխարներն ու գառները                   | 76 |
| Գալի ընտանիքը                           | 77 |
| Նապաստակի ճուտերը                       | 78 |
| Մալը աբջն անտառում                      | 79 |
| Մեր կենդանի անկյունում                  | 81 |
| Մասի արթնանալը                          | 82 |
| Գարուն հ                                | 83 |
| Բանջարանցում                            | 83 |
| Մեր փորձերը                             | 84 |
| Դուք վարունգ սիրում եք                  | 85 |
| Ցանցինք սիսեռ                           | 86 |
| Ցանցինք ամստրողկ                        | 86 |
| Սոխ ծլեցրեք                             | 87 |
| Կարտոֆիլ ցանհցեք                        | 87 |
| Մոլախոսեր                               | 88 |
| Կնճթավոր բղեղները                       | 89 |
| Բանջարանցի, այգու յեվ դաօսի բարեկամները |    |
| Խլուրդի դատը                            | 91 |
| Վոզնի                                   | 92 |
| Դառնանք գորտի բարեկամը                  | 93 |
| Ճանաչեցեք միջատներին                    | 93 |

Ա Մ Ա Ռ

|                      |    |
|----------------------|----|
| Յերբ ե լինում        | 94 |
| Եքսկուրսիա դեպի ճակը | 95 |
| Մաղիկներ             | 97 |
| Արեի և Ջրի մասին     | 99 |



1939p.

11

4466-1 R.

26117

